Azg
Ազգ
8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2004 ՇԱԲԱԹ 220 (3151)

Լավրովն Անկարային խոսացել է Երևանին «հասկացնել» անհրաժեշտը

ԱՆԿԱՐԱ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքական «Հուրիեթը» գրել է, որ Կովկասում կայունության ապահովման և Թուրքիայի ու Հայաստանի միջև առկա խնդիրների վերացման համար Ռուսաստանը խոսացել է Անկարային՝ «ավելի շատ ճնշումներ» գործադրել Երևանի վարչակազմի վրա: Ըստ թերթի, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ այդ մասին զրույցի ժամանակ նշելով, որ կայունության հաստատումը Հարավային Կովկասում բխում է տարածաշրջանի բոլոր երկրների շահերից, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլլա Գյուլն ասել է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա ղարաբաղյան խնդրի լուծումը մեծ ազդեցություն կունենա Կովկասում հանգստություն ապահովելու գործին: Նա ասել է, որ Թուրքիան մտադիր է Հայաստանի հետ կապված մի շարք «խոնարհումներ» կատարել և նշել, որ դրա համար «նախապես հայկական կողմից որոշ խոնարհումներ սպասում են թուրքերը»: «Եթե հայերն անեն այդ քայլը, ապա մենք կպատասխանենք դրան: Իսկ եթե նման քայլ հայերը չանեն, ապա թուրքական կողմից ոչ մի նախաձեռնություն էլ չի լինի, քանի որ դրանով ամենաշատը հայերն իրենք են շահագրգռված», ասել է թուրք արտգործնախարարը: Ռուսաստանի արտգործնախարար Լավրովն էլ նշելով, որ «դա շատ դրական մոտեցում է», հայտարարել է, որ Թուրքիայի կողմից սպասվող քայլերի մասին «անհրաժեշտ բացատրություններ» կհաղորդի Հայաստանին և համոզմունք հայտնել, որ այդ հարցում առաջխաղացում անպայման կլինի:

Եվրոյի, դոլարի եւ ռուսական ռուբլու արհեստական արժեզրկումով Հայաստանի բաղաքացիներին թալանում են



Երեկ երեկոյան մայրաքաղաքի արժույթի փոխանակման կետերը միաստաբար եւ հավանաբար համակարգված ձեւով դիմեցին հերթական մեթենայությանը. եթե կեսօրին 1 դոլարի դիմաց տալիս էին 465 դրամ, ապա երեկոյան առի լավագույն գինը 460 էր: Նկատենք, որ մեկ օրվա տարբերությամբ դոլարը արժեզրկվեց 15 կետով. դեկտեմբերի 6-ի երեկոյան 1 դոլարի դիմաց վճարում էին 475 դրամ:

BBC-ն հաղորդում է, որ երեքշաբթի օրը միջազգային սակարաններում դոլարը որոշ կայունացումից հետո շարունակեց արժեզրկվել եվրոյի նկատմամբ: Բնականաբար, դոլարի սրընթաց անկմանն արձագանքում է նաեւ Հայաստանի շուկան: Սակայն, մյուս կողմից, անհասկանալի է, թե ինչու են հայկական դրամի նկատմամբ արժեզրկվում նաեւ դոլարի նկատմամբ արժեւորվող եվրոն եւ ռուսական ռուբլին:

Այսպես, եթե դեկտեմբերի 6-ին Երեւանի արժույթի փոխանակման կետերում 1 եվրոյի դիմաց վճարում էին 650 դրամ, ապա երեկ երեկոյան 620-640-ի սահմաններում էր: Նույնը վերաբերում է ռուսական ռուբլուն: Դեկտեմբերի 6-ի երեկոյան ռուսական 1 ռուբլին գնվում էր 17 դրամով, 1 օր անց՝ 16-ով: Չնայած դրամի նկատմամբ (ծիծաղելի է նույնիսկ ասել) եվրոյի, դոլարի եւ ռուսական ռուբլու սրընթաց արժեզրկմանը, հայաստանյան շուկայում ապրանքների գների իջեցում չի նկատվում:

Գաղտնիք չէ, որ Ամանորի նախօրեին Հայաստանի բնակիչների մի սվար զանգված գումարներ է սանում արտերկրում բնակվող հարազատներից: Հավանաբար սա է պատճառը, որ Հայաստանի ֆինանսական շուկան առավել «զգայուն» է եւ փորձում է հնարավորինս շատ կլոել քաղաքացիներին: Ֆինանսական մեծ գիտելիքներ պետք չեն հասկանալու, որ առնվազն եվրոյի եւ ռուսական ռուբլու, ինչպես նաեւ դոլարի «երեկոյան» արժեզրկումը կատարվում է արհեստականորեն:

Ա. Հ.

(Դրամի փոխարժեքի մասին կարդալ նաեւ 2-րդ էջում):

ՍՈՖԻԱ

Ադրբեջանը պետական բնակեցման քաղաքականություն է իրականացնում հայկական գրավյալ տարածքներում

Օսկանյանը եւ Մամեդյարովը վիճաբանում են ու համաձայնում նորից հանդիպել դեկտեմբերի 9-ին

Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հերթական հանդիպումը կկայանա դեկտեմբերի 9-ին, Բրյուսելում՝ Եվրատլանտյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ) մասնակից երկրների արտգործնախարարների նիստի շրջանակներում: Այս մասին Ինտերֆաքսին ասել է Ադրբեջանի ԱԳՆ մամլո քարտուղար Մեթին Միրզան: Դեկտեմբերի 5-ին Սոֆիայում տեղի ունեցած հանդիպմանը էլմար Մամեդյարովը եւ Վարդան Օսկանյանը պայմանավորվել են շարունակել ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները՝ «Պրահայի հանդիպումների» ձեւաչափում, ասել է Միրզան:

ԵԱՀԿ արտգործնախարարների Սոֆիայի հանդիպման իր ելույթում էլմար Մամեդյարովն ասել է, որ Պրահայում Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների բանակցությունների 4 փուլերը որոշակի հույսեր են առաջացրել:

«Պրահայի բանակցությունների ընթացքում մենք քննարկել ենք հիմնական հարցերը, ներառյալ Ադրբեջանի գրավյալ տարածքների վերադարձը, տրանսպորտային եւ այլ հաղորդակցությունների վերականգնումը, Հայաստանի եւ Ադրբեջանի բնակչոն միջպետական հարաբերությունների հաստատումը, հակամարտությանն առնչվող քաղաքական հարցերի ասպիճանական լուծումը», Մամեդյարովի խոսքերը մեջբերում է «Մեդիամամը»:

Ըստ Մամեդյարովի, Ադրբեջանը ցանկանում է բարելավել Հայաստանի հետ հարաբերությունները, սակայն «դա հնարավոր չէ անել զինված ագրեսիայի արդյունքում ձեւավորված այսպես կոչված «իրողությունների» հիման վրա, եւ մեր հարեւանը պետք է հրաժարվի այն պատրանքից, թե ժամանակն իր օգտին է աշխատում»: «Մեր վստահությունը Հայաստանի նկատմամբ, որն այսօր հավասար է զրոյի, կարող է վերականգնվել միայն այն դեպքում, եթե մենք տեսնենք, որ նա պատրաստ է դուրս հանել իր զորքերը մեր գրավյալ տարածքներից», ասել է Մամեդյարովը:

Տես էջ 3

Սկսվեց ամերիկահայ բարերարի ունեցվածքի յուրացման վերաբերյալ դատական գործը

Երեկ Երեւանի Կենտրոն-Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում սկսվեց ամերիկահայ բարերարներ Տորոս եւ Քերոլայն Նաջարյանների հարուցած գործի քննությունը, ինչի մասին տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանի կայքէջը: Ըստ հայցվոր կողմի ներկայացուցիչների, ինչպես պնդում էին հայցի բարերարները «Ազգին» հղած իրենց նամակում, որի ամփոփումը տպագրվել էր թերթի դեկտեմբերի 4-ի համարում, Տորոս Նաջարյանը Ջորագյուղում ձեռք է բերել 2 հողատարածք եւ սկսել շենքերի կառուցումը, երբ պարզվել է, որ նրա վստահված անձը՝ Գրիգոր Իգիթյանը յուրացրել է դրանք, ինչպես նաեւ Երեւանի Աբովյան փողոցում գտնվող ֆոտոխանութը, օգտվելով այն հանգամանքից, որ որոշ օտարերկրյա քաղաքացիներ գործարքների կատարման ժամանակ Նաջարյանները դեռեւ իրավունք չունեին սեփականություն ունենալու Հայաստանում: Նույն Գր. Իգիթյանը, միաս հայցվոր կողմի պնդմամբ, համատեղ գրանցված ՍՊԸ-ից խաբեությամբ դուրս է գրել տվել Նաջարյանների մյուս վստահված անձին՝ Երեւանի պետհամալսարանի արեւելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գուրգեն Մելիքյանին:

Հայցվոր կողմը պահանջել է ոչ միայն վերականգնել Տ. Նաջարյանի սեփականության իրավունքները նշյալ անշարժ գույքի նկատմամբ, այլեւ քննություն բացել, թե ինչու է գլխավոր դատախազության քննչական խումբն աղբրիկի կասեցրել Նաջարյանի հայցի քննությունն ընդդեմ Գր. Իգիթյանի: Դրա համար թերեւս հիմք են հանդիսացել, ինչպես գրում է «Ազատության» թղթակիցը, վերջինիս պնդումները, թե ինքը նույնպես մեծ ներդրումներ է կատարել շենքերի կառուցման համար եւ այդ ներդրումները շենքերի արժեքի հիմնական մասն են կազմել:

Դատը կշարունակվի 2 օրից:

Ֆրանսիան Ադրբեջանից պահանջում է 120 մլն դոլար

ԲԱՔՈՒ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանը պետք է ֆրանսիական պետությանը փոխհատուցի լողում ամբարձիչի խորտակմամբ պատճառված վնասը 120 մլն. դոլարի չափով: Խոսքը 1994 թվականի ամռանը տեղի ունեցած նավաբեկության մասին է, երբ ադրբեջանական «Վագր» նավի կողմից բոմբիրի վերցված լողում ամբարձիչը, որ պատկանում էր ֆրանսիական պետությանը, խորտակվել էր փոթորիկի ժամանակ ՀԱՀ-ի մոտակայքում: Տուժած կողմը պահանջում է վնասի դիմաց փոխհատուցում 120 մլն. դոլարի չափով եւ, Ադրբեջանի կողմից այդ պահանջի անտեսման դեպքում, Ֆրանսիան սպառնում է սառեցնել Ադրբեջանի արտասահմանյան հաշիվները, այդ թվում Պետական նավթային ֆոնդի, եւ կալանք դնել Ադրբեջանի սահմաններից դուրս լողարկող նավերի վրա:

Տասը տարի առաջ ՀԱՀ-ի ափերի մոտ «Վագրը» հայտնվել է ուժեղ փոթորկի մեջ, որի հետեւանքով լողում ամբարձիչը խորտակվել էր: Իսկ անցած տարվա նոյեմբերին Քեյփթաունի դատական իշխանությունները վճիռ են արձակել Ֆրանսիայի օգտին:

Պուտինի այցը կողմերի առջեւ բացում է համագործակցության հեռանկարներ

Համագործակցությունը ենթադրում է ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի նկատմամբ Թուրքիայի դիրքերի ամրապնդումը

ՀԱՐՈՒՐ ՉԱՔԱՐՅԱՆ

Ավարտվեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի երկօրյա պաշտոնական այցը Թուրքիա: Արդյունքները դեռեւս ամփոփվում են: Այդ ընթացքում թուրքական մամուլը շարունակում է հիմնավորել դրա պատմականությունը: Պուտինի այցի պատմականության պարագայում խոսքը վերաբերում է ոչ այնքան նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի հետ ստորագրած «Թուրքիայի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության բարեկամության եւ բազմակողմանի գործակցության խորացման մասին համատեղ հռչակագրին» կամ այն համաձայնագրերին, որոնք կնքվել են հռչակագրի շրջանակներում, որքան ռուս-թուրքական այսպես կոչված նորաստեղծ գործակցությունն ինչպես Եվրամիության, այնպես էլ ԱՄՆ-ի դեմ օգտագործելու կողմերի ձգտումներին:

Ձգտումների առումով թերեւս պատահական չէին այցի արեւմտյան գնահատականները, որոնց խաչաձեւած արտահայտությունը դարձավ ֆրանսիական «Ֆիգարոյի» հետեւյալ ձեւակերպումը. «Ժամանակները հիրավի փոխվել են, հին թշնամիները տնտեսական գործընկերներ են դառնում»: Ինչո՞վ են պայմանավորված այդ ձգտումները: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ շնորհիվ վերոհիշյալ հռչակագրի եւ դրանից բխող համաձայնագրերի, Ռուսաստանը էներգետիկայի եւ ռազմարդյունաբերության բնագավառներում ներդրումներ կատարելու հնարավորություն է ստանում Թուրքիայում: Փոխարենը, թուրքերի առջեւ բացվում է Անդրկովկասում, Միջին Ասիայում, Սեւ ծովի ավազանում Ռուսաստանի հետ համագործակցելու հեռանկարը:

Տես էջ 3

Մոսկվում պայթեցվել է հայկական եկեղեցի

ԻՐԱՔ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեքշաբթի օրվա երկրորդ կեսին Իրաքի հյուսիսում գտնվող Մոսուլ քաղաքում պայթեցվել են երկու եկեղեցիներ: Ականատեսների վկայությամբ, անհայտ անձինք գրոհել են քաղդեական եւ հայկական եկեղեցիները, նախապես պայթեցնելով երկու ռումբ: Զոհերի եւ ավերածությունների մասին առայժմ չի հաղորդվում:

Յաղոնչիկի ժամկետը երկարաձգվեց

ՄՈՍԿՎԱ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մոսքաղդատարանը կալանքի տակ թողեց Վյաչեսլավ Իվանկովին, որ քրեական շրջաններում հայտնի է Յաղոնչիկ անունով: Այս մասին հայտնել է նրա փաստաբան Սերգեյ Կոտելեւսկին: Այսպիսով, դատարանը մերժել է Իվանկովի պաշտպանության վճռաբեկ գանգատը: Նոյեմբերի 15-ին Մոսկվայի Զամոսկվորեցկի դատարանը երկարացրել էր Իվանկովին կալանքի տակ պահելու ժամկետը մինչեւ 2005 թվականի հունվարի 18-ը, հաղորդում է «Նովոստի» գործակալությունը:

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Դաշնակցությունը ստիպված կլինի անմիջապես հետեւություններ անել, եթե...

«Քաղաքական մի քանի խնդիրներ դեռեւս բավական դժվար լուծելի են: Երկաթուղու աբխազական հատվածը, որ Հայաստանը միացնում է Ռուսաստանին եւ Եվրոպային, անմիջապես բացել հնարավոր չէ, եւ արագ պետք է ափխաստեցնել լաստանավերը Փոթի նավահանգստով: Ես հուսով եմ, որ այդ ուղղությամբ մեր ջանքերը հաջողությամբ կպսակվեն եւ Վերին Լարսի նման միջադեպերի դեպքում Հայաստանին վնաս չի հասնի», երեկ ԱԺ-ում հայտարարեց ԱԺ փոխնախագահ **Վահան Հովհաննիսյանը**, որ նոր էր վերադարձել դեկտեմբերի սկզբներին Սանկտ Պետերբուրգում եւ Մոսկվայում գրեթե միաժամանակ կայացած միջխորհրդարանական վեհաժողովի եւ հայ-ռուսական միջխորհրդարանական հանձնաժողովի նիստերից:

Վահան Հովհաննիսյանը կարծում է, որ ընդհանրապես հայ ռուսական հարաբերություններում, հատկապես միջազգային տարբեր մակարդակներում անհրաժեշտ պահին եւ համապատասխան կոորդինացիա չի արվում, որի պատճառով 2 կողմն էլ տուժում է: Հայ-ռուսական համատեղ ստորագրված փաստաթղթում որոշվել է ապահովել հենց այդ կարգի համագործակցություն: ԱԺ փոխնախագահը դա շատ կարեւոր է համարում՝ հատկապես նկատի առնելով Եվրոխորհրդի, ԵԱՀԿ եւ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովների առաջիկա մարտահրավերները:

Ի դեպ, Վահան Հովհաննիսյանն ակնարկեց, որ ռուսները որոշակի խանդով են վերաբերվում ՆԱՏՕ-ի հետ մեր հարաբերություններին: Նրանց բացատրվել է, որ դա մեր անկախ քաղաքականության բաղադրամասն է, եւ դրանից հետայլ անել չենք պատրաստվում: Հստակեցվել է, որ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների վերաբերյալ որոշակի միջպառլամենտական կոնսուլտացիաների անցկացման անհրաժեշտություն կա:

Մեր պատվիրակները պնդել են միայն մի երրորդ երկրի մասնակցությունը եւ այդ կոնսուլտացիաներին, որպեսզի «մերոնք չհայտնվեն մեկուսացման վտանգի առաջ»:

Հետաքրքրական միջադեպ է արձանագրվել միջխորհրդարանական վեհաժողովի նիստի ժամանակ: Դարձյալ Արամ Գ. Սարգսյանը հայտարարել է, որ Ռուսաստանը պետք է հարգել Լեռնային Ղարաբաղի հարցում: Դա եղել է միայն նրա, իբրեւ ընդդիմության ներկայացուցչի տեսակետը: «Իրոք, դա եղել է միայն Արամ Գ. Սարգսյանի տեսակետը: Ես չեմ կարծում, որ այդ խնդրի մանրամասն պարզաբանումը մեր երկրի շահերից է բխում: Ռուսաստանի դիրքորոշումը շատ պարզ է. նա ասում է՝ ինչ լուծման շուրջ կպայմանավորվեն հայերը եւ ադրբեջանցիները, այն էլ մեզ համար ընդունելի կլինի: Այսինքն, եթե մեր ընդդիմադիրներն ավելին են ուզում կորզել, որպեսզի Ռուսաստանը բացահայտ արտահայտվի, թե ես Հայաստանի կողմն եմ, նման բան չի լինելու: Ամեն ինչ չէ, որ պետք է բացահայտ ասել: Այն, ինչ ռեալ է կատարվում, բոլորովին ուրիշ բան է», այսպես բացատրեց ընդդիմադիր գործչին իր հայտարարության հետ միայնակ թողնելու պատվիրակության մյուս անդամների խաղաղությունը Վահան Հովհաննիսյանը:

«Մեծամասնական տարածքներում տեղի է ունենում համամասնական ձայների առեւտուր»

Հայտնի է, որ ԱԺ ափխազական վերջին խորհրդակցության ժամանակ Վահան Հովհաննիսյանը հայտարարել էր, որ եթե ընտրական օրենսգրքում չլինի այն համամասնությունը, որ իրենք պահանջում են մեծամասնական եւ համամասնական տեղերի՝ 30-70 հարաբերակցության վերաբերյալ, դաշնակցությունը բյուջեին դեմ կվեարկի: Կուսակցության դիրքորոշման նման կոշտացումը ԱԺ փոխնախագահը այսպես մեկնաբանեց. «Ես գտնում եմ, որ ճիշտ կլիներ օր առաջ քննարկել այդ հարցը, մինչեւ բյուջեի քվեարկությունը, որովհետեւ շատերի դիրքորոշման վրա կարող էր ազդել: Բայց քաղաքականությունը փոխզիջումների արվեստ է, եւ քանի որ մենք լուրջ հավաստիացումներ ենք ստացել լուրջ մարդկանցից, որ փետրվարին ընտրական օրենսգիրքը կվեարկվի հենց այն ձեւով, որ որոշվել է նախապես, կոալիցիայի ստեղծման ժամանակ մենք բյուջեի քննարկումը ընտրական օրենսգրքից կախման մեջ չենք դնում»:

Իսկ եթե իրենց ակնկալածն, այնուամենայնիվ, իրականություն չդառնա, արդա դաշնակցությունը ստիպված կլինի անմիջապես հետեւություններ անել: Որովհետեւ «մեծամասնական տարածքներում տեղի է ունենում համամասնական ձայների առեւտուր», եւ իրենք ուզում են դա դեմն առնել:

Վահան Հովհաննիսյանը չբացառեց ուկրաինական ու վրացական սցենարների կրկնությունը ԱՊՀ որեւէ երկրում, այդ թվում եւ Հայաստանում:

Միջխորհրդարանական հաջորդ նիստը կայանալու է մայիսին, եւ այս անգամ, ըստ Վահան Հովհաննիսյանի, մեր պատվիրակները շեշտադրում են անելու «Գույտ պարտի դիմաց» ծրագրով Ռուսաստանին տրված ձեռնարկություններն ափխազերեն ստանալու խնդրի վերաբերյալ:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԴԱՐՅԱՆ

Ցեղասպանության հարցը միջպառլամենտական վեհաժողովի օրակարգում

Հաջորդ տարի լրանում է Հայոց ցեղասպանության 90-ամյակը: ԱԺ խորհրդարանականները մտադիր են հայոց հարցը մտցնել ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի օրակարգ: «Իհարկե, մենք այնտեղ շատ հակառակորդներ ենք ունենալու, եւ հաջողության երաշխիքներ իսկ կան, բայց այդ հարցի արծարծումը կարեւոր ենք համարում», ասաց ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը:

Տ. Դ.

ԳՅՈՒՄՐԻ

Երկրաշարժի զոհերի հուշարձանի մոտ

1988 թ. աղետալի երկրաշարժից անցել է 16 տարի, սակայն ամեն տարի այդ օրը հիշվում է դառնությամբ:

Երեկ նախագահ Քոչարյանն այցելեց Գյումրի՝ երկրաշարժի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանին ծաղկեպսակ դնելու: Ներկա էին ՀԺԿ, «Օրինաց երկիր» կուսակցությունների, Գյումրու քաղաքապետարանի, Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչները եւ պետական այլ այրեր:

Ինչ է փոխվել Գյումրիում երկրաշարժից 16 տարի հետո: «Փոփոխություններ եղել են, մանավանդ վերջին երեք տարիներին հսկայական տեղաշարժեր են եղել, վերակառուցվել է երկուսից երեք մայրուղի, Շարլ Ազնավուրի հրապարակը, 35.000 տնակներից 9000-ի բնակիչներն ապահովվել են բնակարաններով: Եթե շարունակվի «Լինսի» հիմնադրամի ծրագիրը, ապա շատ ընտանիքների բնակարանների հարցը կլուծվի, քանի որ այսօր 5000 ընտանիք բնակարանի ոեալ կարիք ունի», պատմում է Գյումրու սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) հյուսիսային բաժնի տնօրեն Սերգեյ Նազարեթյանը:

Իսկ ՍՊԱԾ հյուսիսային բաժնի տնօրենի տեղակալ Սամվել Հովհաննիսյանը նշեց, որ թեպետ Գյումրին այսօր գրեթե 50 տոկոսով վերակառուցվել է, սակայն պրոբլեմները շատ են: «Ում ոգին բարձր է, ափխաստում է, ապրում, արարում, բայց շատ զոհեր ունեցողների հոգին կոտրված է, դա պետք է վերականգնել, որ հասարակությունը լիարժեք լինի», նշում է պրն Հովհաննիսյանը:

Ճիշտ է, այս տարիներին Գյումրիում զգալի փոփոխություններ եղել են, բայց որ գյումրեցիներից շատերը մինչ օրս ապրում են վաս պայմաններում, անժխտելի է: «16 տարեկան երեխաս ընդամենը երեք տարի է դպրոց գնացել... Ըստեղ կռապաշտությամբ են զբաղվում, օրը մեկի արձանն են բացում, կողը պարում, իսկ մենք սոված մեռնում ենք», պատմում է Գյումրու բնակչուհի Զուլիետա Ղուկասյանը: Իսկ մի տատիկ էլ դժգոհում էր, թե ինչպես է, որ մեր պետական պաշտոնյաները չեն նկատում երկրաշարժի զոհերի հուշարձանի հարեւանությամբ գտնվող իրենց ավերված տունը եւ չեն էլ ցանկանում վերանորոգել:

Բնակիչներից շատերը եկել էին նախագահին հանձնելու իրենց հոգսաշատ նամակները, պատմելու իրենց պրոբլեմները, սակայն հանդիպեցին թիկնապահների կարծր պատին եւ նամակներն էլ նախագահին հանձնելու փոխարեն հանձնեցին թիկնապահներին:

Հուսանք, որ մի օր Գյումրին ամբողջությամբ կվերականգնվի եւ կբարգավաճի՝ օգնելով գյումրեցիներին պահելու իրենց հումորը եւ բոլոր այն հատկանիշները, որոնցով բնորոշ է Գյումրվա բարի կոլորիտը:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայաստանը կրկին հավակնում է դառնալ տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն

Այս անգամ խթանը «Սինոփսիս» ընկերությունն է

Առաջիկա հինգ տարիներին ինտեգրալ սխեմաների նախագծման ավտոմատացման ասպարեզում համաշխարհային առաջատար «Սինոփսիս» ընկերության բազայի վրա գործող Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր միջդեպարտամենտալ ամբիոնը մասնագետներ կպատրաստի այդ ընկերությունում աշխատելու համար:

Վերջերս Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը եւ ամերիկյան «Սինոփսիս» ընկերությունը ստորագրեցին համագործակցության պայմանագիր: Ամեն տարի համալսարանի կոմպյուտերային համակարգերի եւ ինֆորմատիկայի, ռադիոտեխնիկայի եւ կարի համակարգերի եւ կիբեռնետիկայի դեպարտամենտի բակալավրական ծրագրի երկրորդ կուրսն ավարտած ուսանողներից մրցութային կարգով կձեւավորվեն ակադեմիական խմբեր: Մագիստրոսական եւ թեկնածուական ատենախոսությունների թեմաներն այս ուսանողների համար կառաջարկի ընկերությունը, իսկ ղեկավարները կլինեն բուհի դասախոսներ եւ «Սինոփսիսի» մասնագետներ: Հիշեցնենք, որ այս տարվա նոյեմբերին «Լեդա դիզայն» ընկերության ակտիվներն ու նրա ճարտարագիտական թիմը ձեռք բերելուց հետո «Սինոփսիսը» ցանկություն հայտնեց համագործակցելու վերոհիշյալ միջդեպարտամենտալ ամբիոնի հետ, որը նախկինում գործում էր «Լեդա դիզայնի» բազայի վրա:

«Մենք հիմնականում լուծել ենք մեր ընկերության Հայաստան մուտք գործելու խնդիրը, այժմ աշխատակիցները սովորում են տիրապետել «Սինոփսիսի» ծրագրային գործիքներին», ասում է ընկերության փոխնախագահ **Ռիչ Գոլդմանը**: Հաջորդ տարի հավանաբար այստեղ սովորող ուսանողների թիվը կկրկնապատկվի՝ հասնելով մոտ 200-ի: Ուսանողների եւ դասախոսների համար նախատեսվում են դասընթացներ ինչպես Հայաստանում, այնպես էլ ԱՄՆ-ում: Ընկերությունը բուհին կտրամադրի միկրոսխեմաների նախագծման ավելի քան 50 ծրագրային փաթեթ, որոնց ընդհանուր արժեքը հավասար է գրեթե 75 մլն դոլարի: «Սինոփսիսը» նախատեսում է համագործակցել ուսումնական այլ հաստատությունների հետ նույնպես: Մասնավորապես՝ Երեւանի պետական համալսարանի հետ արդեն նախնական քննարկումներ են տեղի ունեցել. համագործակցությունը հավանաբար կսկսվի 2005-ի աշնանից:

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ղեկավարությունն ընկերության հետ համագործակցության արդյունքում ակնկալում է համալսարանի կադրային առաջարկի եւ ընկերության պահանջարկի կապ, դասախոսական կազմի համալրման եւ կատարելագործման հոյակապ հնարավորություն, նյութական խթաններ:

«**Ազգի**» այն հարցին, թե Հայաստանում պետական մակարդակով որքանով են գիտակցում մեր երկրում «Սինոփսիսի» առկայության կարեւորությունը եւ որքանով են պատրաստ նպաստել դրա զարգացմանը, «Սինոփսիս-Արմենիա» ընկերության ներկայացուցիչ **Հովիկ Մուսայելյանն** ասաց. «Ընկերությանը գրավում է Հայաստանի կառավարության մոտեցումն այս ոլորտի զարգացման ուղղությամբ, նրանք այստեղ ոլորտի զարգացման մեծ հեռանկարներ են տեսնում: Ընկերությունը կենտրոններ ունի Չինաստանում, Հնդկաստանում, Եվրոպայում: Իսկ եթե Հայաստանում ամեն ինչ բարեհաջող լինի, սա կլինի տարածաշրջանային զարգացումների կենտրոն: Նույնիսկ Ռուսաստանում ընկերությունը մասնաճյուղ չունի: Հայաստանում մտադիր են այլ ընկերություններ նույնպես ձեռք բերել»: Ինչ վերաբերում է ուսումն ավարտելուց հետո երիտասարդների բանակում ծառայությանը, Հովիկ Մուսայելյանը նշեց, որ խնդրի վերաբերյալ բանակցություններ են վարում, իսկ այժմ հարցը փորձում են լուծել անհատական մոտեցումներով:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵՍՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵՍՆ / հեռ. 529221
Լուսագրողների սենյակ / հեռ. 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Անցուդարձ

Փոխարժեքի վրա ազդող երեք հիմնական գործոններ կան

Որոնք ներկայացրեց Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը

Առաջին գործոնը բնակչության սպասումներն են, որոնք ձեւավորում են փոխարժեքը: Երկրորդը՝ համաշխարհային տնտեսության ցիկլերը, երրորդը՝ շոկերը, որոնք ճգտում են մտցնում իրավիճակի մեջ: Թվարկելով վերոնշյալ գործոնները, Տիգրան Սարգսյանը նշեց, որ Նոր տարվա նախաշեմին մարդկանց դոլարային խնայողությունները վերածվում են դրամի: Բացի այդ, փոխարժեքի վրա ազդում են Եվրոբանկի եւ ԱՄՆ ֆեդռեզերվի ղեկավարների հայտարարությունները: Մեր հարցին, թե արդյոք մեր շուկայում չկան խուճապային տրամադրություններ, որոնք կարող են հանգեցնել ավելի կտրուկ տատանումների, ԿԲ նախագահը, վերահաստատելով սպասումների ազդեցությունը փոխարժեքի վրա, կարեւորեց խուճապային տրամադրություններից զերծ մնալը: Ինչ վերաբերում է Կենտրոնական բանկին, ապա նա շարունակելու է կոշտ դրամավարկային քաղաքակա-նության եւ փոխարժեքի վրա արհեստական միջամտության բացառման որդեգրած քաղաքականությունը:

Տիգրան Սարգսյանն առավել մանրամասն անդրադարձավ ԿԲ սղաճի զսպման քաղաքականությանը, ասելով, որ բնակչության համար ավելի կարեւոր է հենց գների մակարդակը, քան փոխարժեքը: Եթե Կենտրոնական բանկը իրականացնի հաստատուն փոխարժեքի քաղաքականություն, ապա կունենանք գների կրկնակի-եռակի բարձրացում: Մինչդեռ դրամի արժեւորումը զսպող ազդեցություն է ունեցել գների վրա: Կոնկրետ վառելիքի միջազգային գների բարձրացման պարագայում Հայաստանում դրանք չաճեցին: Եթե վառելիքի գները բարձրանային, ապա դրան կհետեւեր մյուս ապրանքների գների բարձրացումը:

Կենտրոնական բանկի նախագահի հավաստմամբ, հնարավոր չէ հաստատուն փոխարժեքի եւ գների զսպման միաժամանակյա գոյությունը: Դրան հասնելու գործիքներ չկան ինչպես Հայաստանում, այնպես էլ Եվրոպայում, ԱՄՆ-ում եւ աշխարհում ընդհանրապես: Նշվեց, որ Եվրոմիությունում սղաճը գտնվում է 2 տոկոսի, ԱՄՆ-ում 2,5 տոկոսի սահմաններում:

Շարունակելով դասախոսության վերածված իր խոսքը, Տիգրան Սարգսյանը շեշտեց, որ Հայաստանի Կենտրոնական բանկը չի կարող միջամտել համաշխարհային տնտեսության մեջ ձեւավորվող գործընթացներին, որոնք ազդում են նաեւ Հայաստանի վրա, ինչն, ի դեպ, տեղի չէր ունենում մի քանի տարի առաջ: Վերջին ամիսներին ձեւավորվող միտումները մտահոգում են նաեւ Եվրոմիության Կենտրոնական բանկին, որը հանդես է եկել խուճապային տրամադրությունները կանխելու նպատակով արված հայտարարությամբ: «Շուկայում եւ միայն շուկայական գործընթացով է որոշվելու փոխարժեքը», ընդգծեց ԿԲ նախագահը: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ նվազագույն սպառողական զամբյուղում ընդգրկված մթերքների հաշվառմամբ, Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, այս տարվա 11 ամիսներին տեղի է ունեցել 0,3 տոկոս գնանկում: Դա գլխավորապես պայմանավորված է եղել հացամթերքների եւ կարտոֆիլի կայուն գներով:

«Ինչպե՞ս են փոխարժեքի տատանումները ազդում Հայաստանի տնտեսության վրա» հարցին Տիգրան Սարգսյանը նույնպես բավականին երկար պատասխանեց: Նա հայտնեց, որ առանց թանկարժեք մետաղների Հայաստանի հիմնական առեւտրային գործընկեր երեք պետություններում՝ Ռուսաստանում, Իրանում եւ Թուրքիայում առեւտրի պայմանները Հայաստանի արտահանողների համար չեն փոխվել, եւ ներկայացրեց այդ երկրներում գնաճի ու գների մակարդակի ցուցանիշները: Այնուհետեւ դոլարի արժեզրկման դեպքում բարենպաստ պայմաններ են ստեղծվում նոր տեխնոլոգիաների ներմուծման եւ բարձրակարգ ապրանքների արտադրության համար, որոնք մրցունակ կլինեն միջազգային շուկաներում: Դրամի արժեւորման արդյունքում նվազում է մեր տնտեսության դոլարիզացիայի մակարդակը: Այսինքն, Հայաստանի քաղաքացիները կնախընտրեն իրենց խնայողությունները պահել ազգային արժույթով, ինչի շնորհիվ մեր կախվածությունը դոլարից կնվազի: Փոխարժեքի հետ կապված ներկայիս խուճապը առաջացավ նաեւ այն պատճառով, որ մեր բնակչության խնայողությունների 75 տոկոսը դոլարով էր: Այդ պատճառով նրանք, ըստ Տիգրան Սարգսյանի, պետք է հետեւեն ԱՄՆ ֆեդերալ ռեզերվի քաղաքականությանն ու հայտարարություններին: Նման վստահությունը ամերիկյան դոլարի նկատմամբ հասկանալի համարվեց, քանի որ իր ստեղծման պահից հայկական դրամը ապրել է հիպերինֆլյացիոն շրջաններ: Այդտեղից, նա տեղեկացրեց, որ ներկայումս բնակչության եւ գործարարների մի մասը իր խնայողությունները դրամի եւ եվրոյի փոխակերպելու մասին է մտածում: Եթե դա տեղի ունենա եւ այդ խնայողությունները վերածվեն դրամի, ապա Կենտրոնական բանկը համարժեք չափով դրամ կթողարկի, ինչը չի ազդի գների մակարդակի վրա:

Շուկայում մի շարք ապրանքների գների թանկացման հարցի առնչությամբ ԿԲ նախագահն այն կարծիքը հայտնեց, որ ներին շուկայում սպառվող հայկական ապրանքների գների աճը կախված է այդ ապրանքների պահանջարկի ավելի մեծ աճի հետ: Վերջինս էլ, ըստ Տիգրան Սարգսյանի, պայմանավորված է բնակիչների եկամուտների աճով: Մեր այն հարցին, թե այս թանկացումները, բացի պահանջարկի աճից, պայմանավորված չեն նաեւ շուկայում գործող ընկերությունների գերիշխող դիրքի չարաշահումներով եւ հակամրցակցային պայմանավորվածություններով, Տիգրան Սարգսյանը չպատասխանեց, ասելով, որ այդ հարցն առնչվում է այդ նպատակով ստեղծված կառույցին (տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին-Ա. Մ.):

ԿԲ նախագահին տվեցին նաեւ այլ հարցեր: Պատասխանելով դրանցից մեկին, նա նշեց, որ Հայաստանի 21 բանկերը այս տարվա 11 ամիսներին արձանագրել են 11 մլրդ դրամի եկամուտ: Մինչդեռ 2 տարի առաջ այդ համակարգն ախտահարվում էր վնասով: Սակայն անառողջ բանկերին դաշտից դուրս բերելուց հետո ներկայումս Հայաստանն ունի առողջ բանկային համակարգ:

Հայաստանում փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման կոնկրետ դեպքերից Տիգրան Սարգսյանը հիշատակեց «Կրեդիտ Երեւանի» դեպքը, երբ վերջինս թողարկել էր մեծ քանակությամբ արժեթղթեր եւ փորձում էր դրանք իրացնել զարգացած երկրներում: Մեկ այլ դեպք էլ հայտնաբերվել է ԱՄՆ-ում, որի մասին տեղեկացրել են ԿԲ գործընկեր բանկերը եւ որի առնչությամբ քրեական գործ է հարուցված:

Ի դեպ, մամուլի ասուլիսը հրավիրվել էր ՀՀ կենտրոնական բանկի պետական արժեթղթերի հաշվառման եւ հաշվարկների իրականացման համակարգի ներդրման կապակցությամբ:

ԱԲՈՒ ՄՈՒՐՏԻԲՈՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Անասնագողերը ձերբակալվեցին

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության օպերատիվ տեղեկագրից, դեկտեմբերի 6-ին ոստիկանության Արմավիրի բաժնի աշխատակիցները գողություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել 1967 թ. ծնված, նախկինում դատված Արսեն Մ.-ին, 1964 թ. ծնված Սուրեն Ե.-ին: Վերջիններս գիշերը պատուհանից մտնելով Սուրիկ Ս.-ի անասնագոմ, գողություն են կատարել: Գողոնը մասամբ առգրավված է, Արսեն Մ.-ն եւ Սուրեն Ե.-ն ձերբակալված են, կատարվում է նախաքննություն:

Խուլիգանության համար եղբայրները բերման ենթարկվեցին

Դեկտեմբերի 5-ին ոստիկանության Տաշիրի բաժնի աշխատակիցները խուլիգանություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել եղբայրներ, 1974 թ. ծնված Արմեն եւ 1967 թ. ծնված Աշոտ Ս.-երին: Վերջիններս նույն օրը Դպրոցականների փողոցի շենքերից մեկի մոտ ծեծել եւ մարմնական վնասվածքներ են պատճառել Աշոտ Կ.-ին: Միջադեպի ժամանակ եղբայրները կատարել են խուլիգանական արարքներ: Կատարվում է նախաքննություն:

Թմրանյութ

Դեկտեմբերի 6-ին ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցները թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով բերման են ենթարկել 1952 թ. ծնված, նախկինում դատված Գագիկ Հ.-ին: Վերջինիս մոտից հայտնաբերվել ու առգրավվել է թմրանյութի զանգված, կատարվում է հետաքննություն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ

Ադրբեջանը պետական ...

1-ին էջից

«Հայաստանը պետք է անհապաղ եւ արդյունավետ քայլեր ձեռնարկի Ադրբեջանի գրավյալ տարածքներում բոլոր անօրինական գործողությունները դադարեցնելու համար», ասել է նա: «Ադրբեջանը չի կարող համաձայնել Հայաստանի բարձրաստիճան ղեկավարների՝ հայերի եւ ադրբեջանցիների էթնիկական անհամատեղելիության մասին հայտարարություններին: Մենք համոզված ենք, որ ադրբեջանցիները եւ Ադրբեջանի քաղաքացիներ հայերը կարող են եւ կողք-կողքի ապրելու են իմ երկրի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում: Ամենամեծ մարտահրավերը, որին մենք բախվում ենք այս տարածաշրջանում, ոչ թե երկու ժողովուրդների էթնիկական ատելությունն է, այլ հարեւանների նկատմամբ տարածքային պահանջների անցյալին պատկանող գաղափարախոսության եւ եվրոպայի բաղկացուցիչ մասը լինելու մեր ցանկության միջեւ եղած անհամատեղելիությունն է», ասել է Մամեդյարովը:

Ադրբեջանի արտգործնախարարն ասել է, որ բարձրացնելով գրավյալ տարածքներում անօրինական բնակեցման հարցը ՄԱԿ-ում, պաշտոնական Բաքուն չէր փորձում փոխել ԼՂ խնդրի կարգավորման միջնորդական ձեւաչափը:

Երեկ Սոֆիայում Հայաստանի արտգործնախարարն իր ելույթի մեծ մասը նվիրել է ԼՂ-ին: Վարդան Օսկանյանը հիշեցրել է, որ հայերի ազատ ապրելու եւ ինքնորոշման պահանջներին Ադրբեջանը պատասխանեց զինված ագրեսիայով: Օսկանյանը մասնավորապես մի հատված է մեջբերել 1992 թ. Եվրոխորհրդի խորհրդարանականների զեկույցից:

«Ադրբեջանական վերջին հարձակումներից Ղարաբաղում ամբողջությամբ ավերվել են գյուղեր, սպանվել են խաղաղ բնակիչներ, բռնության են ենթարկվել երեխաներ: Հաշվի առնելով ադրբեջանական զինուժի հստակ առավելությունը ԼՂ ունեցած մարդկային ուժի, զենքի ու սարքավորումների, վառելիքի եւ սննդի մատակարարման մակարդակի, ավիաթռիչքի, հրթիռների արձակման եւ օդային ռմբակոծման հաճախականության համեմատությամբ, կարելի է ենթադրել, որ մինչեւ Ղարաբաղի անկումն ընդամենը մի քանի շաբաթ է մնացել, եթե ոչ ավելի քիչ: Ակնհայտ է, որ դրան ամենայն հավանականությամբ հաջորդելու են ցեղասպանությունը եւ տեղահանումը», մեջբերել է նախարարը:

Օսկանյանը կրկնել է, որ ԼՂ-ում չի տարվում վերաբնակեցման պետական քաղաքականություն: Հայաստանի արտգործնախարարը նկատել է, որ Ադրբեջանն է պետական բնակեցման քաղաքականություն իրականացնում հայկական գրավյալ տարածքներում՝ Շահումյանում, Գետաշենում, ինչպես նաեւ Մարտակերտում, ինչին արձագանքել է ՄԱԿ-ը եւ հանձնարարական տվել Ադրբեջանին միջոցներ ձեռնարկել, որպեսզի հայերին, ում սեփականությունն ապօրինի բռնազավթված է, տրամադրվի այլընտրանքային կեցության վայր:

«100 հազարավոր բռնագաղթածների գոյությունը հետեւանք է Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների եւ, ի տարբերություն իմ կոլեգայի, ես կասեմ, որ փախստականներ կան միաժամանակ երկու կողմից: Ադրբեջանցի կես միլիոնից ավելի փախստականներից բացի կան նաեւ գրեթե կես միլիոն հայեր, որոնք փախուստի են դիմել թե՛ Ադրբեջանի մայրաքաղաքից, թե՛ անմիջական հակամարտության գոտուց», ասել է Օսկանյանը:

Ի դեպ, ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը ԵԱՀԿ Սոֆիայի հանդիպման իր ելույթում հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղում եւ Մոլդովայի ու Վրաստանի անջատողական տարածաշրջանում իրավիճակի կարգավորման գործում վերջին մի քանի ամիսներին ձեռք բերված առաջխաղացումը մեծ չի եղել: «Սառեցված հակամարտությունները սառեցված մնում են սառը պատերազմի ավարտից նույնիսկ 15 տարի անց», ասել է Փաուելը:

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Պուտինի այցը...

1-ին էջից

Ավելին, ռուսները խոստանում են Թուրքիա արտահանվող ռուսական գազի դիմաց 1 մլրդ դոլարի ծավալով թուրքական ապրանքներ ներմուծել եւ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» հարցում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում պաշտպանել թուրքական տեսակետը: Այս ամենը կարեւոր է երկու երկրների համար: Սակայն նրանց համար ավելի կարեւորը ռուսական գերազդեցության տարածքներում ծավալվող ԵՄ-ԱՄՆ մրցակցությունն է, ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ներթափանցումն այդ տարածքներ, թուրք-ամերիկյան հակասություններն են ու ԵՄ-ի հետ անդամակցության բանակցությունների սկզբնավորման համար Թուրքիային պարտավորությունների տեսքով ներկայացվող պահանջների ցանկի ընդլայնումը:

Ակնհայտ է, որ ԱՄՆ-ի ռուսական գերազդեցության տարածքներ ներթափանցման պայմաններում, երբ Ռուսաստանը Վրաստանից, Աջարիայից, ինչու չէ նաեւ Աբխազիայից հետո իր դիրքերը զիջում է Ուկրաինայում, թերեւ դրանով էլ կամա թե ակամա նպաստում Սեւ ծովի վերածմանն ամերիկյան ծովի, Ռուսաստանի հետ Անդրկովկասում, Միջին Ասիայում եւ Սեւ ծովի ավազանում համագործակցելը ցանկալի արդյունք չի ապահովի Թուրքիային: Պարզապես դա կդիտվի թուրքական ոսնձգություն ամերիկյան շահերին, եւ Վաշինգտոնին կդրդի միջոցառումներ ձեռնարկել ոսնձգության դեմ:

Այլ կերպ, ստեղծված միջազգային իրավիճակում ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի համար խնդիրն Անդրկովկասը, Միջին Ասիան կամ սեւծովյան ավազան չէ, այլ երկկողմ կամ տարածաշրջանային համագործակցություններն են: Որքան էլ դրանք չկասեցնեն ԱՄՆ-ի ներթափանցումը ռուսական գերազդեցության տարածքներ, առավել եւս այդ տարածքներում ամերիկյան ազդեցության տարածումը, այնուամենայնիվ նպաստելու են Վաշինգտոնի դեմ Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը: Քանի որ ԵՄ-ը ռուսական գերազդեցության տարածքներում մրցակցելով հանդերձ ԱՄՆ-ի հետ, ամերիկյան ազդեցությունը փորձում է հակակշռել Ռուսաստանի ազդեցությամբ, ուստի վերջինի հետ համագործակցելով Թուրքիան դիրքեր կամրապնդի նաեւ ԵՄ-ի նկատմամբ:

Դիրքերի ամրապնդումը հրաշալի է իր գերազդեցության տարածքներից վտարման սպառնալիքի տակ գտնվող Ռուսաստանի, ինչպես նաեւ թուրք-ամերիկյան հակասությունների նոր դրսեւորումներով սրման պայմաններում դեպի ԵՄ կողմնորոշվող, այսինքն՝ ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի միջեւ խուսանավող Թուրքիայի համար: Ակնհայտ է, որ Ռուսաստանի հետ համագործակցությունը ԵՄ-ի նկատմամբ Թուրքիայի դիրքերն ամրապնդելիս, կընդլայնի նաեւ եվրոպական այդ կառույցի ու ԱՄՆ-ի միջեւ խուսանավելու նրա հնարավորությունը: Իսկ դա հնարավորություն կտա Թուրքիային վերոհիշյալ պարտավորությունների շուրջն ավելի նպաստավոր իրավիճակում սակարկել եվրոպական երկրների հետ՝ ապահովելու համար անդամակցության բանակցությունների սկզբնավորումը:

«Ազգ» նոյեմբերի 27-ի եւ դեկտեմբերի 1-ի համարներում, անդրադառնալով Իրանում ցեղասպանություն իրագործելու ԱՄՆ-ին հասցեագրված մեղադրանքներին եւ դրանց Վաշինգտոնի սպառնալիքներով հագեցված հակազդեցությանը, նշել էր թուրք-ամերիկյան հակասությունների սրման մասին: Թուրքական մամուլն էլ դեկտեմբերի 7-ին տեղեկացնում է ԵՄ-ի նախագահող երկիր Հոլանդիայի պատրաստած Թուրքիային առնչվող նոր զեկուցագրի նախագծի մասին:

Այս նախագիծը դեկտեմբերի 14-ին քվեարկության է դրվելու Եվրախորհրդարանում, իսկ դեկտեմբերի 17-ին ստորագրվելու է ԵՄ-ի գագաթաժողովում, որպեսզի ներկայացվի Եվրախորհրդի քվեարկությանը: Այլ կերպ, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցությունների սկզբնավորման հարցը հրաշալի է եւ դրա լուծումը որոշվում է այս օրերին: Դա ինքնաբերաբար հրաշալի է դարձնում նաեւ Ռուսաստանի հետ Թուրքիայի համագործակցությունը, հատկապես այն դեպքում, երբ եվրոպացիներն անդամակցության բանակցությունների համար վերջինին նոր պարտավորություններ են տալիս: Սա նշանակում է, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցը ճիշտ ժամանակին էր, ռուս-թուրքական հին թշնամանքի վերածումը գործընկերության՝ առավել եւս:

ԱԶԳ **Գործնականություն**

Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանում

Տերթերը կվերանան մեկ տարուց

Երբ պատրաստ կլինի բանկի նոր ընդարձակ շենքը

***Վերջին ժամանակներս** շատացել են հերթերը Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանի Երեւանում գործող երկու մասնաճյուղերում: Բանկի հաճախորդները դժգոհում են ոչ միայն գոյացող հերթերից, այլեւ սպասարկման մակարդակից: «Ազգի» զրուցակիցը Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Նիֆ Դ. Գիլմորն է:*

Նիֆ Գիլմորի խոսքերով, հերթերը նախ եւ առաջ պայմանավորված են նրանով, որ չնախատեսված չափերով մեծացել է բանկի հաճախորդների թիվը: «Հայաստանի ողջ տնտեսությունը եւ բանկային համակարգը հեռզիեստ զարգանում են եւ ավելի մեծ հաջողություններ են ունենում: Եվ մարդկանց վստահությունը բանկերի նկատմամբ մեծացել է:

Մարդիկ իրենց անկողինների տակ փողերը թաքցնելու փոխարեն գումարները տալիս են բանկերին: ՀՀ-ում մեր բանկը եւս այդ վստահությանն է արժանացել եւ մարդիկ իրենց ավանդները, գումարները սկսել են վստահել նաեւ մեզ», իրավիճակի իր բացատրությունը այսպես ներկայացրեց պարոն Գիլմորը:

Ըստ բանկի գլխավոր գործադիր տնօրենի, Վազգեն Սարգսյան-9 հասցեում գտնվող գլխամասային գրասենյակը 1996 թ.-ին բացելիս նախատեսվում էր սպասարկել մինչեւ 5.000 հաճախորդի: 1999թ. բացվեց նաեւ «Կոմիտաս» մասնաճյուղը:

Ներկայումս գլխամասային գրասենյակը 5.000 հաճախորդի փոխարեն սպասարկում է 20.000 հաճախորդի, «Կոմիտաս» մասնաճյուղն էլ նախատեսված է 5000 հաճախորդի սպասարկելու համար:

«Մենք չէինք կարծում, թե այդքան շուտ կհասնենք նախատեսվածին «Կոմիտաս» մասնաճյուղում, նաեւ գլխամասային գրասենյակում: Այսինքն հաճախորդների թիվն այնքան արագ աճեց, որ նախատեսվածից պարզվեց մի քանի անգամ ավելի է», նշեց Նիֆ Գիլմորը:

Ներկայումս բանկը նոր շենք է նախատեսում, որը շատ ավելի մեծ կլինի եւ կսպասարկի ոչ միայն արդեն ունեցած հաճախորդներին, այլեւ մի քանի անգամ ավելի:

Հերթերն ու տարածքի անբավարարությունը բանկը չէր ծրագրել: «Մենք չէինք նախատեսել, որ նման խնդիր կունենայինք: Հայաստանում զարգացումը բավականին արագ եղավ: Եվ ծագած խնդիրները միայն էյչ-էս-Բի-Սի-ի խնդիրները չեն: Եթե ունենք շատ հաճախորդներ, ուրեմն այս երկրում զարգացումը նորմալ է ընթանում», բացատրեց պարոն Գիլմորը:

Ըստ բանկի գլխավոր գործադիր տնօրենի, հաճախորդների սպասարկումը կախված է մարդկային ռեսուրսներ եւ տարածք ունենալուց: Բանկը տվյալ պահին չունի անհրաժեշտ տարածք ու չի կարող ապահովել անհրաժեշտ ռեսուրսները: «Այո, սպասարկումը այն մակարդակին չէ, ինչ մենք կուզենայինք ունենալ: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստանը տարածքային խնդիր ունի», ասաց Նիֆ Գիլմորը:

Ինչ վերաբերում է բանկի վարկային քաղաքականությանը, ապա կորպորատիվ հաճախորդներին վարկի տրամադրումը աճել է գրեթե 100 տոկոսով, իսկ անհատական հաճախորդների առումով 400 տոկոսով գերազանցվել են բանկի նախատեսած ցուցանիշները, այսինքն՝ 4 անգամ ավելի հաճախորդ է օգտվել վարկավորումից, քան ծրագրվել էր:

Վարկերի տոկոսադրույքը, ըստ Նիֆ Գիլմորի, էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստանում ավելի ցածր է, քան մյուս բանկերում: «Կորպորատիվ հաճախորդների համար վարկի տոկոսադրույքը կախված է հաճախորդից: Այս պահին մեր ամենախոշոր հաճախորդների վարկային տոկոսադրույքը 14 տոկոս է: Ինչ վերաբերում է անհատական վարկերին, մենք երեւի ամենացածր տոկոսադրույքն ունենք շուկայում», պարզաբանեց բանկի գլխավոր գործադիր տնօրենը:

«Ոչ մի այլ բանկ կորպորատիվ հաճախորդներին 2 տարուց ավելի ժամկետով վարկ չի տրամադրում: Մենք երկու տարուց այդ ցուցանիշը զարգացրել եւ հասցրել ենք մինչեւ 5 տարի: Ինչ վերաբերում է անհատական վարկերին, ապա մենք հիմա անհատական վարկերը անշարժ գույքի դիմաց եւ կյանքի ապահովագրության առկայության դեպքում տրամադրում ենք 14 տոկոսով, եթե հաճախորդը չունի կյանքի ապահովագրություն, ապա՝ 15 տոկոս»:

Վարկերի տրամադրման ժամկետները անհատական հաճախորդների համար եւս, ըստ պարոն Գիլմորի, ավելին են, քան հայկական մյուս բանկերում: Նախկին 4 տարի ժամկետի փոխարեն բանկն այս տարվա ապրիլից անհատական կարգով վարկեր տրամադրում է մինչեւ 7 տարի ժամկետով:

Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանից վարկ ստանալու դժվարության առումով Նիֆ Գիլմորն ասաց, որ դա ամբողջ Էյչ-Էս-Բի-Սի-ում ընդունված քաղաքականություն է: «Այսինքն, մարդիկ պետք է մեզ հետ աշխատեն, մենք պետք է ճանաչենք մեր հաճախորդին, նա էլ մեզ պետք է ճանաչի, որ մենք իրեն վարկ տրամադրենք: Ըստ էության, մեր բանկից վարկ ստանալը ոչ թե դժվար է, այլ այդպես ճիշտ է»:

Բանկի ապագա ծրագրերի առնչությամբ գլխավոր գործադիր տնօրենը հույս հայտնեց, որ բանկի վարկային քաղաքականությունը կթեթեւանա, մարդիկ ավելի լավ կհասկանան բանկային համակարգը: Իսկ նոր շենքը կբացվի թերեւս 2005 թ. դեկտեմբերին:

Ավելի հեռանկարային ծրագրերում բանկը նախատեսում է մասնաճյուղ ունենալ Երեւանում եւ մեկ ուրիշը՝ Երեւանի տարածքից դուրս:

Զրույցի ավարտին վերադառնալով հաճախորդների սպասարկման խնդրին՝ պարոն Գիլմորը նշեց. «Ես համաձայն եմ, որ մեր հաճախորդների սպասարկումն այն մակարդակին չէ, որ պետք է լինի: Ես ներողություն եմ խնդրում մեր հաճախորդներից, որ այս պահին մենք չենք կարողանում ապահովել այն մակարդակը, ինչ մակարդակի որ կուզենայինք սպասարկել»:

Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանի գլխավոր գործադիր տնօրենը ասաց, որ նոր շենքի բացման հետ մեկտեղ հնարավոր կլինի բարձր մակարդակով ապահովել ավելի մեծ թվով հաճախորդների սպասարկումը, քան ունի բանկը ներկայումս:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Կազմակերպությամբ պրոֆ. Վ. Ֆոյերշտայնի «Խաչքար» միջազգային միության

Մայնի Ֆրանկֆուրտի համալսարանի «Աստ» ուսանողության տան դահլիճում տեղի ունեցավ Համշենին նվիրված «Մշակույթի օր»

Առաջին անգամ այսօր աշխարհում շուրջ 1.5 միլիոն համշենահայության մասին (1 միլիոնը Թուրքիայում, մնացյալը Հարավային Ռուսաստանում եւ Աբխազիայում) արեւմտյան ակադեմիական հաստատություններից մեկում՝ խորհրդաժողով է կազմակերպվում: Հարավային Կովկասի լեզուներին ու մշակույթին քաջ ծանոթ պրոֆ. Վոլֆգանգ Ֆոյերշտայնը, իր գործակից, պատմաբան Ալիյե-Ալիս Ալթի (համշենահայ) օգնությամբ՝ «Խաչքար» միջազգային միության կազմակերպությամբ՝ Մայնի Ֆրանկֆուրտի Գյոթեի անվան համալսարանում դասախոսությունների մի շարք ունեցավ, որտեղ ելույթ ունեցան, պրոֆ. Ֆոյերշտայնից հետո՝ դոկտ. Ախիմ Շիբոլը, համշենահայեր Նուրեսին Գյուրմանը եւ Ալիս Ալթը: Տեղի ունեցան քննարկումներ, որոնց ընթացքում հայտնի դարձան հետեւյալ անժխտելի պատմական փաստարկները, որոնք տասնամյակներ շարունակ փորձում են մերժել ու թաքցնել Թուրքիայի պետական ու քաղաքական շրջանակները.

Ա. համշենահայերը Թուրքիայում, իրենց այսօրվա աշխարհագրական բնակավայրում ապրել են հայրենասիրական շարունակ, անընդհատ ենթարկվելով հալածանքների, կոտորածների, բռնի հարկահանության ու կրոնափոխումների, որոնց պատճառով մի մասն իսլամացել է 16-րդ դարից սկսած մինչեւ Մեծ եղեռնի օրերը՝ պահպանելով, սակայն, լեզուն ու սովորույթները Թուրքիայում (Տրապիզոնի եւ Սպեր նահանգի մերձսեւծովյան լեռնաշխարհում, որի գլխավոր քաղաքն այսօր Ռիզեն է):

Բ. Ըստ պրոֆ. Վ. Ֆոյերշտայնի, որն այցելել է Վրաստանի ու Թուրքիայի համշենահայերին, այսօր պատմական բնակավայրում 20.000 համշենահայեր խոսում են իրենց բարբառով, մնացյալը՝ լազերեն կամ թուրքերեն:

Գ. «Հարեւան» լազերը համշենահայերին կոչում են «սոմեխներ» (հայեր), իսկ թուրքերը շատ լավ գիտեն իսլամացած համշենահայերի ինքնությունը, մանավանդ, որ թուրքական հանրապետության բարձրագույն ատյաններում աշխատում են բազմաթիվ «թուրքացած» համշենահայեր:

Դ. Երբ Ռուսաստանում եւ Աբխազիայում ապրող հարյուր հազարավոր համշենահայեր վայելում են ամեն կարգի մշակութային, ազգային, կրթական ազատություններ, նույնիսկ «Բաղրամյան» զինված ջոկատ (...), Թուրքիայի համշենահայերի վրա գործադրվում են ամեն կարգի քաղաքական ճնշումներ եւ արգելքներ իրենց ազգակից եղբայրների ու քույրերի հետ կապեր հաստատելու համար, ինչպես իր մտահոգությունն էր հայտնել համշենահայ մի ծերունի՝ «դարձյա՞լ գյավուր ենք դառնալու...»:

Հայ ազգագրագետներին ու պատմաբաններին մնում է պետական հովանավորությամբ կազմակերպել համշենահայությանը նվիրված գիտաժողով՝ քննելու այս «մոռացված» հայկական մեծագույն էթնիկական խմբավորման ազգային փրկության ուղիները:

Հ. ՄՈՍԿՈՖՅԱՆ

Մայնի Ֆրանկֆուրտ

Երեւանում բացվեց բրիտանական ապրանքների ցուցահանդեսը

Հայաստանում գործող բրիտանական ընկերությունները երեկ իրենց ապրանքներն ու ծառայությունները ներկայացրին «Կոնգրես» հյուրանոցի սրահում: Ընդ որում, ցուցահանդեսում ներկայացված էին ինչպես բրիտանական կապիտալով Հայաստանում արտադրվող, այնպես էլ եվրոպական այդ երկրից ներմուծվող ապրանքները: Շուրջ երկու տասնյակ ընկերությունների թվում էին ներկերի, մեքենաների յուղերի, լվացող եւ մաքրող միջոցների, ոգելից խմիչքների, դեղերի արտադրությամբ եւ վաճառքով զբաղվող, ավիափոխադրումներ, հրատարակչական գործունեություն իրականացնող եւ մի շարք այլ կազմակերպություններ:

Ավիացիայի ոլորտը ներկայացնում էր Հայաստանի շուկայում արդեն յոթ տարի օդային փոխադրումներ իրականացնող «Բրիտանական ավիաուղիների BMED ընկերությունը»: «Բուլվինոս թեմիկալզ» ընկերությունը արտադրում է մաքրող, լվացող եւ ախտահանող միջոցներ, որոնք, ընկերության ներկայացուցչի հավաստմամբ, բացի ներքին շուկայից վաճառվում են նաեւ Ռուսաստանում, Անգլիայում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Սաուդյան Արաբիայում: «Ֆարմատեք» ընկերությունը հայտնի է ներերակային լուծույթների արտադրությամբ, դեղերի ներմուծմամբ եւ վաճառքով ու միաժամանակ մի շարք դեղագործական հայտնի ընկերությունների ներկայացուցիչն է Հայաստանում: Ոգելից խմիչքների խոշորագույն արտադրող «Դիաջո» ընկերության պատասխանատու ներկայացուցիչ «Ագենա» ընկերությունը ներկայացնում էր հանրաճանաչ ընկերության «Սմիռնով» օղին, «Ջոննի Ուոկեր» շոտլանդական վիսկին, «Գինես» մուգ գարեջուրը, «Բեյլեյս» լիկյորը եւ այլ խմիչքներ: Հրատարակչական գործունեությամբ է զբաղվում «Մակմիլան» ընկերությունը:

Բրիտանական ապրանքների եւ ծառայությունների ցուցահանդեսը կգործի նաեւ այսօր:

Ա. Մ.

Կարլէն Դալլաֆեան Բէյրութի մէջ

Ռամկավար ազատական կուսակցութեան եւ Թէմէեան մշակութային միութեան Լիբանանի շրջանակին կողմէ հրաւիրուած՝ արդէն Բէյրութ կը գտնուի հայրենի ծանօթ գիտնական, պետական գործիչ պր. Կարլէն Դալլաֆեան:

Հայրենի մեծ մտաւորականներու շարքին դասուող պատուարժան հիւրը սանձնած է պետական մեծ պատասխանատուութիւններ խորհրդային Հայաստանէն ներս, ի շարս այլոց վարելով «Հայ եկեղեցու գործերի խորհրդի», ինչպէս նաեւ՝ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահի պաշտօններ:

Իր կեցութեան ընթացքին, պր. Դալլաֆեան պիտի շարունակէ գրի առնել ՌԱԿ-ի պատմութիւնը, որուն Ա. մասը՝ 1921-1940 թուական, դարձեալ իր պատրաստութեամբ, արդէն իսկ լոյս ընծայուած է 1999 թուականին: Նշեալին առընթեր եւ իբրեւ չօրանեանագէս՝ ան պիտի բանախօսէ ԹՄՄ Լիբանանի վարչական խորհուրդի կողմէ կազմակերպուած եւ Արշակ Չօպանեանի մահուան 50 ամեակին նուիրուած հրապարակային հանդիսութեան: Ան պիտի ունենայ շարք մը շահեկան դասախօսութիւններ եւ ելոյթներ Միջին Արեւելքի կարգ մը գաղութներէն ներս Լիբանան կատարած իր այս այցելութեան ընթացքին:

Տեղին է նշել, թէ պր. Դալլաֆեանի կեցութեան, ինչպէս նաեւ ՌԱԿ-ի պատմութեան 2-րդ հատորի լոյս ընծայման ծախսերուն մեկենասն է ՌԱԿ Կեդրոնական վարչութեան ատենադպիր՝ Յակոբ Վարդիվառեանը Նիւ Ջերզիէն:

ՌԱՖԻ ՄԱՍԼՈՅ

ԿԵՂԲՈՆԱԿԱՆ ԴԻՒՆ

Պուտինն ընդունո՞ւմ է Ուկրաինայում Ռուսաստանի պարտությունը

Յանուկովիչն ու Յուշչենկոն իրենց ընտանիքները դուրս են բերել Կիեւից

Վլադիմիր Պուտինն Անկարայում հայտարարել է, որ Ռուսաստանը «հանգիստ կընդունի հեղափոխական ոգեւ տարածում յուշանկյուր ժողովրդի կամքը»: Պաշտոնական այցով Թուրքիայում գտնվող Պուտինն ասել է, որ Մոսկվան պատրաստ է աշխատելու Ուկրաինայի ընտրված նախագահի հետ: Մյուս կողմից, ըստ BBC-ի, նա ընդգծել է, որ Ռուսաստանը չի պաշտպանի Ուկրաինայում իրադարձությունների ուժային եղանակով զարգացումները:

«Անթույլատրելի է, երբ այս կամ այն քաղաքական գործիչն ասում է՝ ամեն դեպքում մենք գրավելու ենք իշխանությունը: Սա ոչ միայն ճնշում է, այլեւ վախեցնել: Մենք Ուկրաինայում չենք կարող պաշտպանել իրադարձությունների նման ընթացքը, անգամ եթե որեւէ մեկը դա անվանի ժողովրդավարություն», Պուտինի խոսքերը մեջբերում է «Նովոստի» գործակալությունը:

Պուտինի այս խոսքերը կարող են նշանակել, որ Ռուսաստանի նախագահը դժվար թե երրորդ անգամ մեկնի Կիեւ եւ հարեւան հանրապետությունում մասնակցի քարոզարշավին: Հիշեցնենք, որ Ուկրաինայի նախագահական ընտրությունների երկու փուլերից առաջ Պուտինը մեկնել է Կիեւ եւ անվերապահորեն իր աջակցությունը հայտնել գործող վարչապետ Վիկտոր Յանուկովիչին:

Եվրոմիության միջնորդությունը Ուկրաինայի քաղաքական ճգնաժամին ցույց տվեց, որ Եվրոպան արդեն արտաքին քաղաքական գործոն է մի տարածքում, որը երկար ժամանակ համարվում էր Ռուսաստանի հետնադաշտը, եւ Մոսկվան այլընտրանք չունի, քան ընդունել այս իրողությունը, գրում է Ռոյթեր գործակալությունը:

Դեկտեմբերի 26-ին Ուկրաինայում տեղի կունենա նախագահական ընտրությունների երկրորդ փուլի կրկնությունը կամ երրորդ փուլը՝ Յանուկովիչի եւ նախկին վարչապետ, «Մեր Ուկրաինա» ընդդիմադիր դաշինքի առաջնորդ Վիկտոր Յուշչենկոն, ըստ «Սանդեյ թելեգրաֆի», հաշվի առնելով անվստահությունը, իր ընտանիքը դուրս է բերել Կիեւից: Հիշեցնենք, որ Ուկրաինայի արեւելյան խորհրդարանական ընտրությունների նախկին բնակիչ Յուշչենկոն ամուսնացած է Ամերիկայի քաղաքացի եւ ԱՄՆ պետքարտուղարության նախկին աշխատակից Կատերինա Յուշչենկո-Չումաչենկոյի հետ:

Պարզվում է, որ Յանուկովիչն էլ է մտահոգված իր ընտանիքի անվտանգությամբ եւ, ըստ BBC-ի, մոտ 1 շաբաթ առաջ նույնպես ընտանիքը հանել է Կիեւից: Չի հաղորդվում, թե նախագահի թեկնածուներն իրենց կանանց եւ երեխաներին հատկապես ուր են տեղափոխել:

Նախագահ Լեոնիդ Կուչման երեկ հայտարարել է, որ մտադիր չէ կատարել Յուշչենկոյի պահանջը եւ արձակել գործող կառավարությունը: Նկատենք, որ Յուշչենկոն 1999-2001 թթ. աշխատել է Կուչմայի հետ՝ գլխավորելով կառավարության ղեկավարի՝ վարչապետի պաշտոնը: Ուկրաինական լրատվամիջոցները գնդում են, որ Կուչման շարունակում է լավ հարաբերություններ պահպանել Յուշչենկոյի հետ, թեեւ հրապարակավ աջակցում է Յանուկովիչին:

Նախօրեին՝ ուշ երեկոյան Կուչմայի, Յանուկովիչի, Յուշչենկոյի, ինչպես նաեւ Լեհաստանի եւ Լիտվայի նախագահների, ԵՄ գերագույն հանձնակատարի ու Ռուսաստանի Պետդումայի նախագահի միջնորդությամբ տեղի է ունեցել հերթական հանդիպումը: Կուչման չի համաձայնել ցրել գործող կառավարությունը: Մի քանի օր առաջ Ուկրաինայի խորհրդարանը պաշտոնազրկել էր գործող վարչապետ Յանուկովիչին, ինչը, սակայն, չի կարող իրավական ուժ ունենալ, քանզի, ըստ սահմանադրության, խորհրդարանը նման լիազորություն ունի այն դեպքում, եթե վարչապետն առնվազն մեկ տարի պաշտոնավարում է, եւ բացի այդ, երկրի նախագահը համաձայն է խորհրդարանի ընդունած որոշմանը:

Ուկրաինան ցանկանում է զորքը դուրս բերել Իրաքից

Ուկրաինայի պաշտպանության նախարարը հայտարարել է, որ երկիրը չունի միջոցներ Իրաքից զորքերը դուրս բերելու, չնայած ավելի վաղ խորհրդարանը կողմ էր քվեարկել Իրաքից զորքերի դուրսբերմանը: Ըստ BBC-ի, Ուկրաինան Իրաքում ունի 1650 զինվոր, եւ սա թվով չորրորդն է ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիայի 30-ից ավելի երկրների մեջ: Պաշտպանության նախարար Ալեքսանդր Կուզմիկն ասել է, որ զորքերի դուրսբերման համար անհրաժեշտ է 11 մլն դոլար: Իրաքից Ուկրաինայի զինուժի դուրսբերմանը կողմ են Յուշչենկոն եւ Յանուկովիչը:

Հոկտեմբերին Ուկրաինան 200-ով կրճատել էր իր զինվորների թիվն Իրաքում: Կիեւը Իրաքում կորցրել է 9 զինվոր, որոնցից 3-ը սպանվել են ռազմական գործողությունների ընթացքում, եւ 3 տասնյակ ուկրաինացիներ վիրավորվել են:

Ուկրաինական զինուժը տեղակայված է Բաղդադից շուրջ 120-140 կմ հարավ-արեւելք՝ լեհական ուժերի վերահսկողության տակ գտնվող շրջանում: Այնտեղ պետք է ուղարկվեն նաեւ 50 հայ ականազերծողներ, ռազմական բժիշկներ եւ վարորդներ, եթե Հայաստանի խորհրդարանը դեմ չքվեարկի Իրաք հայկական միավորում ուղարկելու կառավարության առաջարկին:

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՖՂԱՆՍՏԱՆ

Համիդ Կարզայի պաշտոնակալությունն անցել է առանց միջադեպերի

Երեկ Քաբուլի նախագահական պալատում տեղի է ունեցել Աֆղանստանում առաջին անգամ, ըստ արեւմտյան աղբյուրների՝ ժողովրդավարական կարգով նախագահ ընտրված Համիդ Կարզայի պաշտոնակալության արարողությունը: Ներկաները ծափողջույններով են դիմավորել նորընտիր նախագահին:

2001 թ. թալիբների վարչակարգի տապալումից հետո ամերիկացիները Կարզային ընտրել էին Աֆղանստանի անցումային կառավարության ղեկավար: 47-ամյա Կարզայը նախագահ դարձավ այս տարվա հոկտեմբերին անցկացված ընտրություններում:

BBC-ն հաղորդում է, որ պաշտոնակալության արարողությանը ներկա են եղել տարբեր երկրներից եկած 150 բարձրաստիճան ղեկավարներ, այդ թվում ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնին եւ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը:

Ոյթեր գործակալությունը նշում է, որ արարողությունն ուղեկցվել է անվտանգության խիստ միջոցառումներով, քանզի թալիբները երդվել էին խափանել Կարզայի պաշտոնակալությունը: Չնայած սպառնալիքներին, որեւէ հարձակում չի եղել, եւ ամեն ինչ խաղաղ է անցել:

Նախագահական պալատում Համիդ Կարզայը երդում է տվել՝ ձեռքը Ղուրանին դրած: Քաբուլցիներին խորհուրդ էր տրված աղահովության նկատառումներով մնալ տներում: Աֆղանական ոստիկանությունը շրջափակել էր Քաբուլի օդանավակայանից նախագահական պալատ տանող 4 կիլոմետրանոց ճանապարհը, իսկ ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի զորքերը ցամաքի վրա եւ օդում ուժեղացրել էին պարեկությունը:

Հաղորդվում է, որ Դիկ Չեյնին երեկ Քաբուլի մերձակա Բագրամի ավիաբազայում հանդիպել է ամերիկացի զինծառայողների հետ: Ինչ վերաբերում է Համիդ Կարզային, նա վայելում է Աֆղանստանի հարավային շրջանների բնակչության աջակցությունը, բայց առայժմ չի վերահսկում ամբողջ երկիրը:

Աֆղանստանում շարունակվում են միջցեղային վեճերն ու բախումները: Մի շարք ազդեցիկ դաշտային հրամանատարներ չեն ենթարկվում կենտրոնական կառավարությանը: Իսկ ափիոնի հարձակն արտադրությունը նորանոր խնդիրներ է առաջադրում Արեւմուտքի պետությունների իրավապահներին եւ հատուկ ծառայություններին:

Փարիզի օդանավակայանում պայթուցիկ կորցրած ժանդարմները կպատժվեն

Ֆրանսիայի ժանդարմերիայի գլխավոր վարչության խոսնակը երեկ մամլո ասուլիսում խոստովանել է, որ ուրբաթ օրը հետմիջօրեին Փարիզի «Ռուասի» օդանավակայանում ոստիկանության մեղքով անհետացել է 150 գրամանոց պլաստիկե պայթուցիկ: Նրա խոսքերով, օդանավակայանում անցկացված մանրակրկիտ որոնումներն արդյունք չեն տվել: Որոշ տվյալների համաձայն, պայթուցիկը հայտնվել է «Ռուասիից» մեկնած օդանավերից մեկի ուղեբեռների մեջ:

Ներքին գործերի նախարար Դոմինիկ դը Վիլպենը լրագրողներին ասել է, որ վստահգավոր բեռի որոնումները շարունակվում են «Ռուասիից» 80 ուղղություններով արտերկիր մեկնած օդանավերում եւ դրանց վայրէջքի վայրերում: Ուղեբեռներից մեկում պայթուցիկը դրված է եղել սուզումների վստահելիությունը փորձելու նպատակով:

Ներքին գործերի նախարարն օդային տրանսպորտի ժանդարմերիայի ձեռնարկած այդ փորձը որակել է որպես «անհասկանալի, դատապարտելի եւ ամոթալի նախաձեռնություն»: Նա հայտարարել է, որ ինքը որոշել է քննություն սկսել, եւ որ կարգազանց ժանդարմների նկատմամբ «կկիրառվեն համապատասխան պատժամիջոցներ»:

Պ. Ք.

Ռուսաստանը մեկ ուրիշ դաշնակից էլ է կորցնում

Անգլիական «Թայմս» թերթի դեկտեմբերի 4-ի համարում Ռիչարդ Բիսոնը վերլուծում է Ուկրաինայում կատարվող իրադարձությունները

Ուկրաինայում Կրեմլի ջանքերի ձախողումից հետո նախագահ Պուտինը դիմակայեց իր հինգ տարվա իշխանության ամենալուրջ ճգնաժամն արտաքին քաղաքականության բնագավառում: Ընդդիմության առեւտրատեխ ղեկավար Վիկտոր Յուշչենկոյի հաղթանակի հասնելու վճռական տրամադրություններին դեմ դիմաց Պուտինը կորցնում է Ռուսաստանի դաշավոր տիրապետությունն իր հարեւանի վրա: Ժողովրդական ուժի դրսեւորումն Ուկրաինայում, Վրաստանից հետո, առավել դժվար է դարձնելու Կրեմլի համար մեթենայություններ կատարել նախկին խորհրդային կայսրության երկրների ընտրություններում:

Ռուսաստանի իրարահաջորդ առաջնորդները ցարդ հավատացած են եղել, որ Ռուսաստանը երբեք չի կարող եվրոպական հզոր տերություն դառնալ առանց Ուկրաինայի, 48 միլիոնանոց մի երկիր, որը խորհրդային տարիներին Մոսկվային մատակարարում էր հումք, արդյունաբերություն եւ աշխատուժ:

Պուտինը չի թաքցնում, որ պաշտպանում է վարչապետ Վիկտոր Յանուկովիչին, որն ուժեղ կապեր է հաստատել Ռուսաստանի հետ եւ պատշաճորեն է ներկայացրել երկրի արեւելյան մասի ռուսախոս բնակչության շահերը: Ռուսաստանի առաջնորդը երկու անգամ այցելեց Ուկրաինա պաշտոնական թեկնածուին պաշտպանելու նպատակով: Մոսկվան հսկայական ռեսուրսներ ներդրեց Յանուկովիչի քարոզարշավին: Նույնիսկ նախքան արդյունքները կհրապարակվեին, Պուտինը Յանուկովիչին շնորհավորեց հաղթանակի առիթով: Բայց Կիեւի հունակի առիթով: Բայց Կիեւի հունակներն ու Արեւմուտքի բողոքները ընտրությունում կեղծիքների վերաբերյալ պարզապես հաստատեցին այն կասկածները, թե ռուսամետ թեկնածուն արեւմտյան հետախուզական գործակալությունների կողմից զրկված է իր հաղթանակից:

Վերջին մի քանի օրերին, հուսահատ Կրեմլը փորձեց գցել իր թեկնածուին եւ գտնել ավելի հարմար մեկին, որը կկարողանար բաժանված երկիրը վերամիավորել: Բայց վերջին ընտրությունը կրկնելու գերագույն դատարանի որոշումը նշանակում է, որ Յուշչենկոյին հնարավոր չի լինելու հաղթել: Յուշչենկոյի հաղթանակից հրաժարվելը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ Ռուսաստանի հարաբերություններում ոչ միայն իր հարեւանների, այլեւ Արեւմուտքի հետ:

Ամերիկյան պաշտոնյաները նշում են, որ Վաշինգտոնի վրդովմունքը սասկանում է հետզհետե՝ տեսնելով թե ինչպես Կրեմլը իշխանությունը կենտրոնացած է պահում, լրատվամիջոցներին լռեցրել է եւ, փաստորեն, վերաթեականացրել երկրի ամենամեծ նավթային ընկերությունը: «Ռուսաստանն ու ռուսական կառավարությունը փորձում են վերականգնել գերիշխանությունը նախկին խորհրդային տարածքում», նշում են Սոֆիսակ տան մոտիկ աղբյուրները: «Դժվար է կանխատեսել, թե ինչպես կկարողանա Մ. Նահանգները շարունակել իր ներկա հարաբերությունները Ռուսաստանի հետ»:

Ռուսաստանում հավանաբար վերաբերմունքը կկարծրանա: Պուտինն իշխանության գլուխ եկավ խոստանալով վերակառուցել Ռուսաստանը հետկոմունիստական քաոսից եւ բարձրացնել իր ազդեցությունն ու հեղինակությունը ինչպես արտաքին, այնպես էլ ԱՊՀ երկրներում: Բայց նրա իշխանության օրոք Ռուսաստանի ազդեցությունը խաթարվել է այն երկրներում, որտեղ առաջ անխոս ենթարկվում էին նրա իշխանությանը:

Անցյալ տարի այս օրերին ժողովրդական խռովությունները Վրաստանում իշխանության գլուխ բերեցին մեկ ուրիշ արեւմտամետ առաջնորդի՝ Միխայիլ Սաակաշվիլուն: Բալթյան երեք պետությունները՝ Լատվիան, Լիտվան եւ Էստոնիան այս տարի միացան Եվրոմիությանը եւ ՆԱՏՕ-ին: Ամբողջությամբ դեմ պատերազմող Մ. Նահանգների զինված ուժերը տեղակայված են այժմ Վրաստանում եւ Ուզբեկստանում: Նավթով հարուստ Ադրբեջանը թշնամի է մնում Ռուսաստանի տարածաշրջանային շահերին, եւ նույնիսկ անցյալում հավատարիմ Հայաստանն է սկսել տարակուսել:

Յուշչենկոյի հաղթանակը Կրեմլի կարծրթեայինների կողմից դիտվելու է որպես Ուկրաինայի կատարած առաջին քայլը դեպի ՆԱՏՕ եւ Եվրոմիություն: Դրանից հետո Ռուսաստանը տարածաշրջանում ունենալու է միայն մեկ դաշնակից՝ Բելառուսի նախագահ Լուկաշենկոն կլինի խղճուկ մխիթարական մի մրցանակ:

Ռուսաստանի որոշ լիբերալ մեկնաբաններ քննադատել են Պուտինին Ուկրաինայի պարագայում ոչ հմուտ ձեւով վարվելու համար, բայց այդ քննադատությունները խեղդվել են ազգայնական կոչերի տակ, որոնք գործողությունների կոչ են անում՝ պաշտպանելու Ռուսաստանի շահերը: Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի տարածաշրջանային մասնագետներից Օքսանա Անտոնենկոն կանխագուշակում է, որ ներկա ճգնաժամն էլ ավելի է ամրապնդելու ազգայնական շարժումը: «Այն ամենն, ինչ տեղի է ունենում Ուկրաինայում՝ Արեւմուտքի մեղքով է, ըստ ռուսական մեդիայի», ասում է նա: «Սա միայն խթանելու է Ռուսաստանում աջերի աճող իշխանությունը»:

«Հույսի դիմանկարներ: Հայերը»

Գերմաներեն նոր գիրք հայերի եւ Հայաստանի մասին

Բեռլինի «Վերլագ Հանս Շիլեր» հրատարակչատունը լույս է ընծայել գերմանախոս ընթերցողների լայն հասարակայնությանը հասցեագրված եզակի մի գիրք, որն ընդգրկում է 52 հոդված Հայաստանի եւ հայերի մասին, տեղեկացնում է Կանադայի «Զորյան» ինստիտուտից ստացված հաղորդագրությունը:

«Հույսի դիմանկարներ: Հայերը» խորագրով նոր գիրքը բաղկացած է երեք բաժնից: Հոլոքոստի ճանաչված պատմաբան Եհուդա Բաուերի նախաբանից հետո առաջին բաժնում ներկայացված է հայոց պատմությունը, առանձնահատուկ ուշադրություն արժանացնելով ցեղասպանությանը: Այստեղ հոդվածներով հանդես են եկել հարգարժան մասնագետներ Թեսա Հոֆմանը, Վահագն Տատրյանը, Թաներ Ակչամը եւ Վոլֆգանգ Գուասը:

Երկրորդ բաժնում ներկայացված են ականավոր հայեր գրականության, արվեստի, նկարչության, քաղաքականության եւ այլ բնագավառում: Նրանց թվում են Վահագն Տատրյանը, Վարդան Գրիգորյանը, Մայքլ Առլենը, Շառլ Ազնավուրը, Ատոմ Էգոյանը, Վարդան Օսկանյանը, կաթողիկոսներ Գարեգին Բ-ն եւ Արամ Ա-ն:

Երրորդ բաժնում «Հիշարժան վայրերն» են, ինչպես օրինակ, Դեր Զորը, Բուրջ Համուդը, Երուսաղեմը, Մուսա լեռը, Ծիծեռնակաբերդը եւ այլն:

Վերջաբանը գրել է «Զորյան» ինստիտուտի նախագահ Գրեգ (Գուրգեն) Սարգիսյանը, որն էլ մանրամասն նկարագրել է ինստիտուտի 22-ամյա գործունեությունն ու ձեռքբերումները:

Գրքի նախաձեռնողն ու կազմողն է Հուբերտա ֆոն Վոս-Վիտիգը, որն արդեն երկու թարգմանական գրքերի հեղինակ է եւ սկսել է հետաքրքրվել հայերենով, երբ ընկերակցել է ամուսնուն, որը որպես Գերմանիայի դեսպան ծառայել է նախ Բեյրութում, ապա Նիկոսիայում: «Որպես պատմաբան եւ լրագրող, ես հանկարծ զգացի, որ շատ փոքր գիտեմ հայերի մասին: Ընդհանրապես գերմանացիները շատ փոքր բան գիտեն հայերի մասին: Այդ պատճառով էլ նախաձեռնեցի կազմել այս գիրքը, եւ ինչքան խորացա, այնքան զգացի դրա կարեւորությունը», խոստովանում է Հուբերտան:

«Մենք երախտապարտ ենք տիկին Վոս-Վիտիգին այս եզակի գրքի լույսընծայման համար, որը, վստահ ենք, մղելու է գերմանացի պատմաբաններին ավելի խորը ուսումնասիրություններ կատարելու հայոց պատմության եւ հատկապես ցեղասպանության բնագավառում», հայտարարել է «Զորյան» ինստիտուտի տնօրեն Զորջ Շիրինյանը:

415 էջանոց գիրքը գերմաներենով է, բայց վերջաբանի անգլերեն տարբերակը, ըստ հաղորդագրության, կարելի է ընթերցել www. zoryaninstitute. org կայքէջում, սեղմելով նախ «About us», ապա «The Making of a National Research Center» սեղմները:

Հ. Ծ.

ՀԱՅԵՐԸ ՕՏԱՐ ԼՐՏՎԱԶՈՒՔԵՐՈՒՄ

Հին ժամանակների կարոտով

«Ամերիկն հերիթիջ» պարբերականի հոկտեմբերյան համարն անդրադարձել է 50-ական թվերին մեծ հաջողություն ունեցած հեռուստատեսային «Հում թոփ շոուին», որը վարել է հայազգի Առլեն Ֆրենսիսը: Նյութի հեղինակ Բեռնար Թիմբերգը 1954-57 թթ. տեւած հաղորդաշարը բնութագրելիս գրել է, որ «դա լրագրության, տեղեկատվության, մշակութային եւ քաղաքական բանավեճի ամենակենտրոնական ու ամենախելամիտ հաղորդումներից մեկն է եղել», որը երբեւէ հեռարձակվել է եթերից, եւ ափսոսանք է արտահայտել, որ չի շարունակվել հետագայում:

«Ծիծաղաշարժ, բայց խայթող»

«Թայմ աութ Նյու Յորք» պարբերականի հոկտեմբերի 14-ի համարում Անդրու Զոնսոնը հայազգի հեղինակ Արթուր Ներսիսյանի «Ցյուղոտվածը» նոր գիրքը որակել է «ծիծաղաշարժ, բայց միաժամանակ նաեւ կծու, խայթող, սաստիկ»: Ըստ «Սոմինյն միրոր տիեթեյթր» շաբաթաթերթի պատմությունը պատմվում է մի դերասանուհու շուրջ, որը մի մահացած գրողի կորսված պիեսն է հայտնաբերում եւ պարզում, որ պիեսը Վալերի Սոլանիսի մասին է, այն մարդու, որն սպանել է նկարիչ Էնդի Ուորհոլին: Հատուկ ուշադրության է արժանացել գրքի հերոսուհին՝ Հաննան:

Հ. Ծ.

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

Յուրի Ղազարյանի երաժշտության աշխարհը

Երեւանի ամբողջական, անբաժանելի «ժամանակակից հայկական երաժշտություն» կամ ավելի ստույգ «հայկական կոմպոզիտորական դպրոց» հասկացությունը ներկայումս տրոհվել է մասերի, տարբեր բեկորների: Նախ եւ առաջ, քանի որ «դպրոցն» այլեւս ամբողջական չէ (ինչպես ամբողջական չեն հասարակությունը եւ ողջ աշխարհը): Երկրորդ՝ հենց ստեղծագործողների գործունեության անջատվածության պատճառով: Քաղելով արտագաղթի եւ «ուղեղների արտահոսքի» ավելի քան տասնամյա գործընթացի պտուղները, մենք դառնությամբ արձանագրում ենք, որ տակավին չենք գտել ազգի ստեղծագործական ներուժի վերամիավորման ուղին, որ «այստեղն» ու «այնտեղը» գոյություն ունեն ավելի շուտ մետաֆիզիկորեն, երբեմն իրար բացառելով. մենք վաս գիտենք, թե ինչ է տեղի ունենում «այնտեղ», իսկ նրանք «այստեղի» մասին էլ ավելի փոքր տեղեկություն ունեն:

Սակայն հայ երաժիշտների (ինչպես եւ առհասարակ արվեստագետների) նոր արտագաղթի փաստը պետք է կարողանանք ընկալել նաեւ դրական կողմից՝ որպես մեր ստեղծագործողների երաժշտության մեծ աշխարհ դուրս գալու հնարավորություն, որտեղ գործում են դաժան մրցակցությունը եւ ընտրության խիստ սկզբունքները:

Հայաստանի կոմպոզիտորների միության եւ Թատերական գործիչների միության անդամ Յուրի Ղազարյանը 1993 թ. Կալիֆորնիա մեկնելով՝ իրեն այնքան մրցունակ դրսեւորեց, որ այժմ իր կենսագրության նոր էջի շեմին է: Խոսքը նրա վերջին խոշոր ստեղծագործության՝ «Պիկասոյի աշխարհը» բալետի մոտալուտ բեմադրության մասին է: Դրա վկայությունը Բելլա Հիրշի ծավալուն հրապարակումն է լոսանջելեսյան «Պանորամա» ալմանախի 2004 թ. օգոստոսի 4-10-ի համարում: Նա մասնավորապես գրում է. «Պիկասոյի աշխարհը» բալետը ռոմանտիկ ավանդազույց է, որը կառուցված է նկարչի կյանքի դրվագների եւ նրա նկարների սյուժեների միահյուսումից: Լիբրետոյի հեղինակը Գրիգորի Չիգինովն է (Իսպանիա): Բալետի հիմնական գաղափարը մարդն է Պիկասոյի ստեղծագործության մեջ»:

Պիկասոյի ոճային կերպափոխմանը հետեւելով Ղազարյանն ստեղծում է կոմպոզիցիա, որտեղ ծավալուն սիմֆոնիկ պատկերները, օրինակ՝ «Գեռնիկան», հարեւանում են Պաբլո Պիկասոյի կտավներից եկող ժանրային-կենցաղային տեսարանների հետ: Ինչպես նշում է Հիրշը, «Ղազարյանն օգտագործել է երաժշտական բոլոր արտահայտչամիջոցները՝ նվագախմբի սիմֆոնիկ եւ կամերային հնչողությունը, խմբերգային երգեցողությունը, մեկ կիթառի երաժշտությունը, ինչպես նաեւ Պիկասոյի բանաստեղծությունների արտասանությունը դրամատիկական դերասանների կատարմամբ: Պիկասոն նկարիչ էր, բայց քչերը գիտեն, որ նաեւ բանաստեղծ էր: Իր բանաստեղծությունները նա գրում էր ճնշվածության պահերին, երբ չէր կարողանում նկարել»: Այնուհետեւ հոդվածագիրը պատկերավոր նկարագրում է «արվեստանոցում Պիկասոյի խորեոգրաֆիկ մենախոսությունը, որն ուղեկցվում է լոկ նրա բանաստեղծությունների արտասանությամբ»:

3. Ղազարյանը «Պիկասոյի աշխարհը» բալետն ստեղծել է երկար ժամանակամիջոցում, ընդմիջումներով: Այն մտահղացվել էր դեռ Երեւանում, եւ այն ժամանակ արդեն պարզ էր, որ հեղինակը նախընտրում է զարգացնել երաժշտական թատրոնի համար իր գրած նախորդ ստեղծագործությունների գեղարվեստական փորձը: Խոսքը «Ադամ եւ Եվա» բալետի, 1972 թ. Մոսկվայի հեռուստատեսությամբ բեմադրված «Վարդագույն խաղաք» ջազ-բալետի եւ որ գլխավորն է՝ «Էռնեստ Հեմինգուեյ» օպերայի (1984) մասին է, որը 1987 թ. մեծ հաջողությամբ բեմադրվեց Հավանայի Մեծ թատրոնում: Կուբայական բեմադրության արձագանքը երկար ժամանակ զգացվում էր Ռուսաստանում, Արեւմտյան Եվրոպայում եւ ԱՄՆ-ում: Եվ հատկանշական է, որ ես օպերայի հեղինակի անունը խմբագրության համաձայնությամբ մտցրել եմ «The Grove Dictionary of Opera» (London, 1992) բառահատոր եւ «The New Grove Dictionary of Music and Musicians II» (London, 2000) 29-հատորանոց հանրագիտարանների մեջ:

1970-ական թթ. Ղազարյանը Ա. Իսահակյանի 100-ամյակին նվիրված հանրաթեատրական մրցույթում ստանում է մրցանակ «Լիլիթ» սիմֆոնիկ պատկերի համար, իսկ Մոսկվայում անցկացված կոմպոզիտորների համամիութենական մրցույթում դիպլոմի է արժանանում ավելի վաղ շրջանի «Հանդիպումներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմի համար (Վ. Մայակովսկու, Վ. Լուգովսկու, Վ. Կարենցի տեքստերով): Չնայած մի ամբողջ շարք կամերային-գործիքային ստեղծագործություններին եւ վոկալ շարքերին (այդ թվում՝ ըստ Պարույր Սեւակի «Դիմակներ» հանրահայտ շարքի), Յուրի Ղազարյանի հիմնական ստեղծագործական հետաքրքրությունները կապված են թատրոնի հետ: Երեւանում նա շատ է գործակցում տարբեր դրամատիկական թատրոնների հետ, գրում է նաեւ ֆիլմերի երաժշտություն:

Հենց Երեւանի Կ. Ստանիսլավսկու անվան թատրոնում է սկսվում Ղազարյանի համագործակցությունն ապագա մշակական լիբրետիստ Գրիգորի Չիգինովի հետ. 1981 թ. այստեղ բեմադրվեց «Ինչպես էր կատուն արհեստ սովորեցնում» մանկական մյուզիքլը, ըստ Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» հեքիաթի: Իսկ հետագայում Չիգինովի հետ Ղազարյանը մշակում է «Էռնեստ Հեմինգուեյ» օպերայի սյուժետային ֆաբուլան եւ դրամատուրգիան ըստ 20-րդ դարի մեծ գրող-մարդասերի վեպերի, վիպակների ու նամակների:

Լրացել է Յուրի Ղազարյանի 70 տարին. թվում է, փոքր տարիք չէ: Բայց ստեղծագործող անհատի համար դա լոկ արտաքին սահմանն է երկար ճանապարհի:

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ,
Արվեստագիտաբան դոկտոր

ԲԵՅՐՈՒԹ

Թեհեյանի սոնետները Պերճ եւ Միրվարդ Քազլյանների մեկնաբանությամբ



Ինչպես հաղորդում են ՌԱԿ մամլո կենտրոնական դիվանից, վաստակաշատ բեմադրիչ ու դերասան Պերճ Քազլյանի եւ իր տիկնոջ՝ արվեստագիտուհի Միրվարդի ձայներիզը՝ նվիրված մեծանուն բանաստեղծ Վահան Թեքեյանի ծննդյան 125-ամյակին՝ հիանալի մի անակնկալ էր ոչ միայն պոլսեցիների (Պերճ Քազլյանը, ինչպես եւ՝ Վահան Թեքեյանը, ծնունդով պոլսեցի են), այլեւ բոլոր հայ արվեստասերների համար: Գուցե այսօր քչերը պետք է լինեն, որ կարողանան այնպես հարազատորեն մեկնաբանել Թեքեյանի նուրբ պոեզիան, այնպես նրբորեն ունկնդրին հասցնեն Թեքեյանի պոեզիայի երաժշտականությունը:

Թվով տասը՝ «Պոլիս», «Լուսատրիչի կանթեղը», «Աղոտները», հատկապես «Կանձրեւէ տղաս» ու «Եկեղեցին հայկական» ֆերթվածքների սիրվարդյան մեկնաբանություններն իրոք անկրկնելի են: Իսկ «Մէկ հատիկս» բանաստեղծությունն անչափ հարազատ է Քազլյան ամուսիններին՝ իրենց մեկ հատիկ դստեր՝ Անիի մահվան պարագայով:

«Դեկտեմբերի 4-ին իր կյանքի 78-րդ տարին թեւակոխած Պերճ Քազլյանը երիտասարդի ոգեւորությամբ շարունակում է իր ստեղծագործական աշխատանքը Բեյրութում», հաղորդում են դիվանից:

Ս. Գ.

«ՆՈՐ ՕՐ» ԹԵՐԹԻՑ

Գրքերի նվիրատվություն Գլենդեյլի կենտրոնական գրադարանին

40 տոկոսով հայաբնակ շրջանի՝ Գլենդեյլի հանրային կենտրոնական գրադարանը, բնականաբար, մշտապես հայ մշակույթի եւ պատմության վերաբերյալ գրականության պահանջարկ ունի: Այս առումով կարեւոր նվիրատվություն էր ամերիկահայ միջազգային ֆոլեջի 12.500 հատոր պարունակող հավաքածուն՝ 500 հազար դոլար արժողությամբ. իրապես արժեքավոր, եթե նկատի ունենանք, որ մինչ այդ գրադարանն ուներ 4000 հայերենով գրականություն՝ ընդհանուր 660 հազար գրքերի մեջ: Հավաքածուն մինչ այդ Լա Վերնի համալսարանում էր: Գրքերի փոխադրման եւ տեսակավորման աշխատանքները կատարումն սանձնել է ֆոլեջը, որի համար հատկացվելու է 25 հազար դոլար: Նվիրատվությունը վավերացրել է քաղաքային խորհուրդը:

Հիշատակի օր

«Երկիր եւ մշակույթ» կազմակերպության եւ Համազգայինի Արեւմտյան Ամերիկայի շրջանային վարչության նախաձեռնությամբ ու հովանավորությամբ Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի եւ անջատյալ Անթիլիասական թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսյանի, դեկտեմբերի 10-ին տեղի կունենա հուշահանդես նվիրված Մեսրոպ արք. Աճեմյանի վախճանման առաջին տարելիցին:

Երեկոն կհանդիսավարի պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, ելույթ կունենան դոկտ. Ռիտա Որբերյանը եւ Փարիզի «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության անդամ Գեղամ Գետնյանը:

Գեղարվեստական հայտագրի հիմնական մասը կկազմեն Համազգայինի «Հ. Թումանեան» մասնաճյուղի «Գուսան» երգչախմբի ելույթները, երեկոյի ընթացքում կլինի տեսաերիզների եւ սլայդների ցուցադրություն:

Ընդունելություն ի պատիվ դոկտ. Արման Կիրակոսյանի

Ամերիկահայ համայնքին ցուցաբերած ուշադրության համար Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդարանի Գալաճյան սրահում նոյեմբերի 1-ին գերշ. Տ. Հովնան արք. Տերտերյանի նախագահությամբ ի պատիվ ՀՀ դեսպան դոկտ. Արման Կիրակոսյանի տեղի ունեցավ ընդունելություն: UCLA համալսարանի պատմության պրոֆ. դոկտ.Ռիչարդ Հովհաննիսյանը ներկայացրեց դեսպանի հրատարակած երկու գրքերը՝ «Հայոց ցեղասպանությունը 1894-1896 թվականներին» եւ «U. S. Media Testimony եւ Անգլիո քաղաքականությունն ու Հայոց հարցը 1830-1916 թթ.»:

Մ. Ք.

ԾԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ

Մրցաշրջան-2004-ը թվերով եւ փաստերով

Արդյունավետությունը նվազել է, դայֆարը թեժացել

Նախորդ առաջնության համեմատ ավարտված մրցաշրջանում արդյունավետությունը նվազել է: Անցկացված 112 խաղում խփվեց 323 գոլ, ինչը 49-ով պակաս է նախորդ տարվանից: Միջին արդյունավետությունը կազմում է 2,88 գնդակ (2003 թ.՝ 3,32): 51 խաղ ահել են դաշտի տերերը, 35-ը՝ հյուրերը, 26 հանդիպում էլ ավարտվել է ոչ-ոքի: Անցյալ տարի ոչ-ոքիների թիվը 18 էր: Սա վկայում է ընթացիկ առաջնությունում պայքարի թեժացման մասին:

Ինչպես եւ նախորդ տարիներին, այս անգամ էլ «Փյունիկի» առավելությունը մրցակիցների նկատմամբ ակնհայտ էր: Մրցաշրջան-2004-ում դա առավել ցայտուն արտահայտվեց: Այսպես, չեմպիոնը 16 միավորով առաջ անցավ 2-րդ մրցանակակիր «Միկայից» (2003 թ. 2-րդ տեղը գրաված «Բանանցից» միավորների տարբերությունը 8 էր), իսկ «Բանանցից» միավորների տարբերությունը կազմեց 28: Զգալի այս տարբերությունները հիմնականում արդյունք են անձնական հանդիպումներում «Փյունիկի» անվիճելի առավելության: Այսպես, «Միկայի» եւ «Բանանցի» հետ 8 հանդիպումներում «Փյունիկը» տոնել է 6 հաղթանակ, 2-ն ավարտել ոչ-ոքի, խփել է 19, բաց թողել ընդամենը 7 գոլ: Հետաքրքրական է, որ առաջատար խառնակի թիմերի միջեւ հանդիպումներն աչքի են ընկել ավելի բարձր արդյունավետությամբ: 24 խաղում խփվել է 73 գոլ (միջինը՝ 3,04), մինչդեռ մնացած հանդիպումների միջին արդյունավետությունը կազմել է 2,84 գոլ (250 գնդակ 88 խաղում):

Առաջնությունում պայքարի լարվածության մասին է վկայում նաեւ խոշոր հաշվով հաղթանակների թվի կտրուկ նվազումը: Եթե անցյալ տարի գրանցվել էր այդ կարգի 44 հաղթանակ (ընդհանուր խաղերի 39 տոկոսը), ապա 2004 թ. առաջնության 112 հանդիպումներից միայն 20-ում է խոշոր հաշիվ գրանցվել (17,8 տոկոսը): Այդ հաղթանակներից 19-ը բաժին է ընկնում առաջատար խառնակին: Բնականաբար, լավագույն ցուցանիշն ունի «Փյունիկը» (12 հաղթանակ): «Արարատը» տոնել է խոշոր հաշվով 3, «Միկան» ու «Բանանցը»՝ 2-ական հաղթանակ: Մեկ հաղթանակ էլ իր օգտին է գրանցել «Կիլիկիան» («Բանանցի» նկատմամբ): Առավել հաճախ՝ 6 անգամ խոշոր հաշվով պարտվել է «Դինամո-Զենիթը»:

Երկու շաբաթ է, ինչ վերջնագիծը հասել է ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի 13-րդ առաջնությունը: Սկսելով առաջնության արդյունքների ամփոփումը, ներկայացնում ենք վիճակագրական մի շարք տվյալներ, որոնք ցայտուն կերպով բնորոշում են մրցաշրջան-2004-ը:

Արդյունավետ գրոհներ, հուսալի պաշտպանություն

Ֆուտբոլային խաղի այս երկու բաղադրամասերը հաջողության գրավականներից են: Առաջնության ամենաարդյունավետ թիմը չեմպիոնն է (89 գնդակ), որը կրկնեց անցյալ տարվա «Բանանցի» ցուցանիշը: «Փյունիկն» այս տարի 2 գնդակով գերազանցեց նախորդ տարվա արդյունքը՝ հասնելով 3,17 միջին արդյունավետության: Իսկ ահա պաշտպանության առումով «Փյունիկը» զգալիորեն վատացրել է իր արդյունքը: Այս տարի թիմը բաց թողեց 25 գնդակ՝ նախորդ տարվա 11-ի փոխարեն: Արդյունքում առաջնության ամենահուսալի պաշտպանություն ունեցող թիմը դարձավ «Միկան» (23 գոլ): Ուշադրության է արժանի «Արարատի» ցուցանիշը, որը 28 հանդիպումներից 12-ում դարպասը պահել է անառիկ: Սա լավագույն արդյունքն է: «Միկայինն» դա հաջողվել է 11 խաղում, «Փյունիկինը»՝ 8:

Երկրի չեմպիոնը միայն մեկ խաղում («Կիլիկիայի» հետ) գոլ չի խփել: Թիմը 16 անընդմեջ հաղթանակ տոնեց, ինչը նոր ռեկորդ է: «Փյունիկը» նաեւ կրկնեց «Շիրակի» անպարտելիության ռեկորդը՝ 59 խաղ շարունակ առաջնությունում չկրելով ոչ մի պարտություն: Գրանցվեցին նաեւ տխուր ռեկորդներ: «Շիրակը» 14 խաղ խաղաց առանց հաղթանակի՝ կրելով 4 անընդմեջ պարտություն: «Կոտայքը» մեկնարկում 8 խաղ շարունակ չէր կարողանում հաղթել: «Կիլիկիան» 12 խաղում չհաղթեց՝ կրելով 5 անընդմեջ պարտություն: «Դինամո-Զենիթն» առաջնության վերջին 8 խաղերում այդպես էլ չճաշակեց հաղթանակի քաղցրությունը:

11 մ հարվածը դեռ գոլ չէ

Ընթացիկ առաջնությունում զգալիորեն նվազել էին նաեւ 11 մ հարվածները: Եթե անցյալ տարի նշանակվել էր 50 11 մ հարված, ապա այս անգամ դրանց թիվը 33 էր: Դրանցից իրացվել է 27-ը (81,8 տոկոսը): Ֆուտբոլիստներից առավել հաճախ եւ հաջող 11 մ իրացրել է «Կիլիկիայի» ոմբարկու Նշան Երզրումյանը՝ նոթատակին հասցնելով բոլոր 5 հարվածները: Արմեն Շահգելդյանն ու Լեւոն Սարգսյանն անվրեպ իրացրել են բոլոր 3 հարվածները: Էդգար Մանուչարյանը 4 հարվածից դիպուկ է իրացրել 3-ը: 2-ական դիպուկ հարված են կատարել Պրեդրագ Բլագոեւիչը, Գագիկ Սումիասյանը եւ Երվանդ Հակոբյանը:

«Արարատի» դարպասպահ Նենադ Ռադաջան ոչ միայն մեկ 11 մ հարված է հետ մղել, այլեւ ինքն է հաջող իրացրել հարվածը՝ խոցելով իր գործընկերոջ դարպասը: Մեկական անգամ 11 մ հարված են հետ մղել նաեւ Թեմուր Գանիեւը, Ռայմոնդ Զադուրյանը, Էդիկ Երիցյանը, Հայկ Դանիելյանը:

	թիմի օգտին (իրացվել է)	թիմի դարպասին (իրացվել է)	ընդամենը (իրացվել է)
Կոտայք	5 (3)	7 (6)	12 (9)
Դ.-Զենիթ	5 (4)	5 (4)	10 (8)
Փյունիկ	5 (4)	4 (3)	9 (7)
Կիլիկիա	6 (5)	2 (2)	8 (7)
Շիրակ	2 (2)	6 (5)	8 (7)
Արարատ	4 (4)	3 (2)	7 (6)
Բանանց	3 (2)	4 (3)	7 (5)
Միկա	3 (3)	2 (2)	5 (5)

«Բոկա Խունիորը» բարելավում է ֆինանսական վիճակը

Արգենտինական «Բոկա Խունիորս» ակումբը բավական հաջող տրանսֆերային գործունեություն է ծավալել: 1996 թ. սկսած թիմի 48 ֆուտբոլիստներ վաճառվել են արտասահմանյան տարբեր ակումբների: Այդ գործարքներից «Բոկա Խունիորսը» ընդհանուր առմամբ վաստակել է 153 մլն 670 հազար դոլար: Եվրոպա տեղափոխված «Բոկա Խունիորսի» առաջին ֆուտբոլիստը Խուան Սեբաստիան Վերոնն էր, որը 1996 թ. հուլիսին 5 մլն դոլարով վաճառվեց իտալական «Սամպդորիային»: Ամենաբարձր տրանսֆերային գինն ունեցել է Վալտեր Սամուելը, որի համար «Ռոման» արգենտինացիներին 22 մլն 250 հազար դոլար էր վճարել 2000 թ.: Երկրորդ ցուցանիշը պատկանում է թիմի 20-ամյա հարձակվող Կառլոս Տեւեսին, որը վերջերս տեղափոխվել է բրազիլական «Կորինթիանս»: Բրազիլացիները նրա տեղափոխման համար 19,5 մլն դոլար են վճարել: 2002 թ. իսպանական «Բարսելոնը» Խուան Ռոման Ռիկելմեի համար 11 մլն դոլար էր վճարել: Արգենտինական ակումբի 10 ամենաթանկ ֆուտբոլիստների ցուցակը եզրափակում է Կլեմենտե Ռոդրիգեսը, որի համար Մոսկվայի «Սպարտակը» 4 մլն դոլար է վճարել:

Արգենտինական ակումբի նախագահ Մաուրիսիո Մակրին նշել է, որ առաջատար ֆուտբոլիստների վաճառքը հարկադիր քայլ է՝ ուղղված ֆինանսական վիճակի բարելավմանը:

Ելենա Իսինբաեւան լավագույն թեթեւատլետն է

Աթենքի օլիմպիական խաղերի չեմպիոնուհի, ձողացատկի աշխարհի բազմակի ռեկորդակրուհի Ելենա Իսինբաեւան ճանաչվել է Ռուսաստանի լավագույն թեթեւատլետ: Նրա մարզիչ Եվգենի Տրոֆիմովը ճանաչվել է տարվա լավագույն մարզիչ: Հարցման արդյունքներով լավագույն թեթեւատլետների եռյակում տեղ են գրաված նաեւ հեռացատկորդ ու եռացատկորդ Տատյանա Լեբեդեւան եւ վազորդ Յուրի Բորզակովսկին:

Իսինբաեւայի հաջողությունն օրինաչափ է: Նա թեթեւատլետիկայի միջազգային ֆեդերացիայի կողմից ճանաչվել է 2004 թ. լավագույն թեթեւատլետ: Իսինբաեւան հիանալի ելույթներ ունեցավ ընթացիկ մրցաշրջանում: Փետրվարի 15-ին նա «Ջողացատկի աստղերը» մրցաշարում համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց (4,83 մետր): Թվում էր, թե այդ ցուցանիշը բարելավել հնարավոր չէ: Նրան մարտահրավեր նետեց ռուսաստանցի մեկ այլ հանրահայտ ձողացատկորդ՝ Սվետլանա Ֆեոֆանովան: Մեկ շաբաթ անց Աթենքում նա հաղթահարեց 4 մ 85 սմ բարձրությունը: Հենց այս երկու թեթեւատլետուհիների միջեւ էլ ծավալվեց պայքարը մրցաշրջան-2004-ում աշխարհի ռեկորդակրի կոչման համար: Մարտի 6-ին Բուդապեշտում Իսինբաեւան աշխարհի նոր ռեկորդ սահմանեց մարզասրահների համար (4 մ 86 սմ), իսկ հունիսի 28-ին Անգլիայում մեկ սմ-ով գերազանցեց իր իսկ ցուցանիշը: Օլիմպիական խաղերի մեկնարկի շեմին նա բարձրագույն նվաճումը հասցրեց 4 մ 89 սմ-ի:

Իր հաղթարշավը Իսինբաեւան շարունակեց Աթենքում, որտեղ ոսկե մեդալ նվաճեց համաշխարհային նոր ռեկորդով (4,91 մ): Այդ ռեկորդի համար նա ՌԴ ԱՕԿ-ից 100 հազար դոլար պարգեւ ստացավ: Միջազգային մյուս մրցումներում սահմանած յուրաքանչյուր ռեկորդ գնահատվում է 50 հազար դոլար:

Իսինբաեւան գտնում է, որ հնարավոր է հաղթահարել 5 մետրի սահմանագիծը: Վոլգոգրադում մարզումների ժամանակ նա արդեն ցույց է տվել նման արդյունք եւ արդեն հաջորդ մրցաշրջանում կփորձի պաշտոնական մրցումներում իր օգտին գրանցել այդ ցուցանիշը:

Մորոզովայի անունը գրանցվել է փառքի սրահում

Ռուսաստանցի թենիսիստուհի Օլգա Մորոզովայի անունը գրանցվել է թենիսի միջազգային ֆեդերացիայի փառքի սրահում: Մորոզովան նախկին ԽՍՀՄ առաջին թենիսիստուհին էր, որին առաջինն է հաջողվել մտնել «Մեծ սաղավարտի» շարքի մրցաշարերի եզրափակիչ: 1974 թ. նա «Ռոլան Գարոսի» եւ Ուիմբլդոնի մրցաշարերի եզրափակիչներում զիջել էր Կրիս Էվերտին: Ներկայում Օլգա Մորոզովան Ելենա Դեմենտեւայի մարզիչն է: Վերջինս 30 տարի անց կրկնեց իր հանրահայտ մարզչի նվաճումը՝ Ֆրանսիայի բաց առաջնության եզրափակիչում պարտվելով իր հայրենակցուհուն՝ Անաստասիա Միսկինային: Մորոզովան ԽՍՀՄ հավաքականի կազմում հանդես է եկել ֆեդերացիայի գավաթի խաղարկություններում (1968, 1978-80 թթ.): Նա հավաքականը գլխավորել է 1988 եւ 1990 թթ. եզրափակիչ մրցախաղերում, որտեղ ԽՍՀՄ հավաքականը պարտվեց չեխերին եւ ամերիկացիներին:

Օլիմպիական չեմպիոնուհուն գեներալի կոչում է շնորհվել

Օլիմպիական խաղերի հնգակի չեմպիոնուհի, թիավարող էլիզաբեթ Լիպան ներկայացվել է ոստիկանության գեներալի կոչման: 40-ամյա ռումինացի մարզուհին մտադիր է մասնակցել 2008 թ. Պեկինում կայանալիք օլիմպիական խաղերին: Դա կլինի նրա 7-րդ օլիմպիադան: Լիպան ակադեմիական թիավարությունում ամենատիտղոսակիր մարզուհին է: Նա պարտը հիանալի է համատեղում իր հիմնական մասնագիտության՝ ոստիկանի աշխատանքի հետ: Ճիշտ է, Աթենքի օլիմպիադային նախապատրաստվելու ժամանակ Լիպան որոշ ժամանակով դադարեցրել էր ծառայությունը ոստիկանությունում եւ իր ողջ ժամանակը տրամադրել էր մարզումներին: Արդյունքը հիանալի էր՝ ռումինացի մարզուհին Աթենքում իր օլիմպիական 5-րդ ոսկե մեդալը նվաճեց:

ՄԵԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ջոնսը հնարավոր է զրկվի մեդալներից

Ամերիկացի թեթեւատլետուհի Մերիոն Ջոնսը հնարավոր է զրկվի 2000 թ. Սիդնեյում նվաճած օլիմպիական 5 մեդալներից եւ որակազրկվի 2 տարով, եթե ապացուցվի, որ նա արգելված խթանիչներ է օգտագործել: Այս մասին Աթենքում սպորտի նախարարների խորհրդաժողովում հայտարարել է համաշխարհային հակադոպինգային գործակալության նախագահ Ռիչարդ Պաուդը: Ըստ գործող կարգի, մարզիկը զրկվում է նվաճած բոլոր պարգեւներից, եթե պարզվի, որ նա մեդալի արժանանալուց հետո հետագա 3 տարիների ընթացքում դոպինգ է օգտագործել: Մերիոն Ջոնսին դոպինգի օգտագործման մեջ մեղադրում է «Բալկո» դեղագործական ֆիրմայի տնօրեն Վիկտոր Կոնտեն: Նա խոստովանել է, որ ինքն է մարզուհուն առաքել արգելված խթանիչները եւ հետեւել է, թե ինչպիսի ազդեցություն են ունենում դրանք Ջոնսի մրցելույթների վրա: Սակայն Սիդնեյի օլիմպիադայում Ջոնսի անալիզներում ոչինչ չէր հայտնաբերվել: Բնականաբար, մարզուհին հերքում է իր հասցեին հնչած մեղադրանքները եւ պատրաստ է դատական հայց ներկայացնել ընդդեմ Կոնտեի, որին առանց այն էլ մեղադրում են արգելված խթանիչների տարածման համար:

Վախճանվել է Ռայմոն Գուտալսը

Երկարատեւ հիվանդությունից հետո վախճանվել է բելգիացի հանրահայտ մարզիչ Ռայմոն Գուտալսը: Նրա ամենամեծ նվաճումը 1993 թ. ֆրանսիական «Մարսելի» հետ չեմպիոնների գավաթի խաղարկությունում հաղթող ճանաչվելն է: Գուտալսի մարզչական գործունեությունը սկսվել է 60-ական թվականներին, բելգիական «Սենտ Տրյույդենում»: Ինչպես եւ բոլոր մարզիչների մոտ, Գուտալսի մարզչական գործունեությունն էլ վայրիվերումներով լի է եղել: Առաջին հաջողությանը նա հասել է 1970 թ. ազգային հավաքականում: Նրա գլխավորությամբ բելգիացիները հանդես եկան Մեխիկայում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնությունում, իսկ երկու տարի անց Եվրոպայի առաջնությունում դարձան բրոնզե մրցանակակիրներ: 1978 թ. բելգիական «Անդերլեխտը» Գուտալսի օրոք դարձել է գավաթակիրների գավաթակիր, իսկ 1982 եւ 1983 թթ. նվաճել է չեմպիոնի տիտղոսը: Հաջորդ հաջողությանը նա սպասված էր երկար սպասել: 1991 թ. «Մարսելը» դարձավ Ֆրանսիայի չեմպիոն՝ երկու տարի անց հասնելով եվրոպական ճանաչման:

«Ինտերը» հետաքրքրվում է Ֆիգոյով

Միլանի «Ինտերը» պատրաստ է բանակցել Մադրիդի «Ռեալի» հետ պորտուգալացի կիսապաշտպան Լուիս Ֆիգոյի հարցով: Ինչպես հայտնի է, «արքայական» ակումբը դեռեւս Ֆիգոյին նոր պայմանագիր չի առաջարկել: Ոսի «Ինտերի» նախագահ Մասիմո Մորատին ցանկանում է հաջորդ տարվա ամռանն իր ֆուտբոլիստներին՝ Քրիստիանո Ջանետիին եւ Էդգար Դավիդսին փոխանակել 32-ամյա Ֆիգոյի հետ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Տնտեսություն

ՀՀ ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը դեկտեմբերի 7-ի նիստում հաստատեց «ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորվող կազմակերպությունների տեղադրած ավտոմատ գանձման սարքավորումների շահագործման նվազագույն պայմանները» եւ «ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից ինքնալուծարման թույլտվություն ստանալու համար ՀՀ ԿԲ ներկայացվող ինքնալուծարումը հիմնավորող փաստաթղթերի ցանկը»:

Խորհուրդը լրացումներ եւ փոփոխություններ կատարեց «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցում» եւ «Բանկերի լուծարման ընթացակարգի ժամանակ ՀՀ պետական բյուջեի եւ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հետ պարտավորությունների ու պահանջների վերջնահաշվարկի կատարման» կարգում:

ԿԲ խորհրդի որոշմամբ անհատ ձեռնարկատերեր Արթուր Ենոքյանին, Հովհաննես Հակոբյանին եւ Նարա Ղազարյանին տրամադրվեցին արտարժույթի առք ու վաճառք իրականացնելու լիցենզիաներ, իսկ Արդա Պետրոսյանին՝ այլ վայրում եւս արտարժույթի առք ու վաճառք իրականացնելու լիցենզիա: Ուժը կորցրած ճանաչվեցին արտարժույթի առք ու վաճառք իրականացնելու թիվ 33 եւ 371 լիցենզիաները:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Դրամավարկային տեղեկատու

Նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 7 մլրդ 713 մլն դրամով եւ դեկտեմբերի 2-ին կազմել 120 մլրդ 688 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) աճել են 2 մլրդ 239 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները աճել են 5 մլրդ 474 մլն դրամով:

Նոյեմբերի 19-26-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածն աճել է 785 մլն դրամով եւ նոյեմբերի 26-ին կազմել 260 մլրդ 47 մլն դրամ (ընդգրկված են 20 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 254 մլն դրամով, կազմելով 85 մլրդ 361 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները աճել են 1 մլրդ 272 մլն դրամով եւ կազմել 33 մլրդ 734 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները աճել են 29 մլն դրամով եւ կազմել 9 մլրդ 632 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 770 մլն դրամով եւ կազմել 131 մլրդ 319 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 69 մլրդ 579 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ աճել են 19 մլն դրամով), ժամկետայինները՝ 61 մլրդ 740 մլն դրամ (նվազումը՝ 789 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում մարվել է 600 մլն դրամի 50-շաբաթյա ՊՊ՝ 9,7140 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Արտարժույթի շուկա

Նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեւավորվել է 0,36 տոկոսով՝ 501,01 դրամից հասնելով 499,19 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 76,271 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 499,39 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը գնել է 5 մլն ՌԴ ռուբլի՝ 17,75 դրամ փոխարժեքով եւ 5 մլն 100 հազ. ԱՄՆ դոլար՝ 501 դրամ փոխարժեքով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Center for Agribusiness & Rural Development (CARD)

VACANCY ANNOUNCEMENT

Announcement Number 04-01

Position: Deputy Director
Closing Date: 15 December 2004, 18:00 PM
Salary: Commensurate with experience.

The Center for Agribusiness and Rural Development (CARD) is a foundation registered in Oct 2004. It will assume activities of the USDA Marketing Assistance Project aimed to assist farmers and agribusinesses in producing, marketing, and exporting food and related products to increase incomes, create jobs, and raise the standard of living for rural Armenians through provision of an integrated package of technical, financial, and marketing assistance. CARD will receive Freedom Support Act (FSA) funding from the U.S. Government, as has MAP, but it will also be in a position to seek other sources of funding, from the US, EU, international organizations, and elsewhere. A Deputy Director will help the Director fully develop this organization, establish the organizational structure, staff it, and develop and execute programs.

Basic Functions:

Under the supervision of the CARD Director, the incumbent will assist the Director and provide oversight on all programs and their operations with a strong focus on the technical and programmatic aspects, monitoring and impact evaluation, training, coordination of CARD projects with outside development implementers, and help build capacity within Armenian agribusinesses. The Deputy Director will advise the Director on CARD programs for food marketing, agriculture, and rural and agribusiness development. Evaluation of the effectiveness and impacts of the programs will be an important part of the role of the Deputy Director. In addition, this position will:

- Assist in building the new CARD organization; assist in hiring local staff; assist in designing programs;
- Devise an effective network for effective communication to all CARD employees and integrate CARD activities, bringing technical, financial, and marketing assistance together as a cohesive package of services for clients;
- Direct resources to the best practices of CARD and to its undertakings;
- Develop approaches to streamline project/program management and generate income;
- Assist the Director with daily project management and with project planning, oversight, budgeting, and implementation;
- Support the Director to liaison with Armenian and international development organizations, the Ministry of Agriculture, Armenian Ag. Academy, and others to strengthen technical collaboration with these organizations to work in the area of agriculture and food marketing.

Requirements:

University degree. Strongly preferred: agriculture, agribusiness management, food marketing, or rural development.

A minimum of 5 years of progressively responsible professional experience with international or local development organizations with emphasis on agriculture, food marketing, or rural development.

Substantial technical, managerial, and logistical experience focused on agricultural development programs. Proven strong communication and negotiation skills is a must.

Experience in teamwork and team building skills, agricultural and rural development project/program creation and management of complex assignments.

Good knowledge of Armenian private and public institutions and policies.

Excellent Armenian, Russian, and English communication skills, both verbal and written. Computer skills, including Microsoft Word and Excel.

Please send a CV highlighting the experience, with the names of 3 references and a cover letter to the following address: *nora@usda.am*, or deliver a hard copy to USDA MAP office at the address: 74 Teryan St., Yerevan (building of AgAcademy, entrance from Teryan St.).

No phone calls please. Only selected eligible candidates will be contacted for an interview.

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO **www.azg.am** IN ARMENIAN, RUSSIAN, ENGLISH AND TURKISH

ՀՀ Կենտրոնական բանկը 8.12.2004թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	484.89	480.00	489.70
EUR	1	ԵՎՐՈ	652.47	648.60	656.40
RUR	1	Ռուս. ռուբլի	17.40	16.40	18.40

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը ներկայացնում է տեղեկատվություն մասնավորեցման մասին

Մրցույթ

N	Անվանում	Հասցե	Գործունեության տեսակը	Գնահատված արժեքը (հազ. դրամ)	Նվազագույն գինը (հազ. դրամ)	Մրցույթի անցկացման օրը
1	«Մասիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ	Արարատի մարզ, ք.Մասիս, Դպրոցականների 5	Ստոմատոլոգիական ծառայություններ	10 389	2598	10.12.2004թ.
2	«Ալավերդու նավթամթերք» ՓԲԸ	Լոռու մարզ, ք.Ալավերդի, Սանահին կայարան	Նավթամթերքի առևտուր	2741	685	10.12.2004թ.
3	«Գլխամասային կոմունտնս» ՊՓԲԸ գույքի կազմից առանձնացված «Վաղարշապատ» հյուրանոց	Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Կիրովի փող.	Հյուրանոցային ծառայություններ	56 852	10 000	05.01.2005թ.
4	Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույք	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Սպանդարյան փող.	Ժամանցի կազմակերպում	3941	985	11.01.2005թ.
5	Հրազդանի կինոցանցի «Բարեկամություն» կինոթատրոնի գույք	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Միկրոշրջան	Ժամանցի կազմակերպում	8484	2121	11.01.2005թ.
6	«Արմավիրի նավթամթերք» ՓԲԸ	Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Սայաթ-Նովա 1	Նավթամթերքի առևտուր	143 625	35 906	14.01.2005թ.
7	«Ամասիայի գյուղատնտեսական ուսումնական բազա» ՊՓԲԸ	Շիրակի մարզ, գ.Ամասիա	Գյուղատնտ. ուսումնա-փորձնական աշխատանքների իրականացում	1088	272	14.01.2005թ.
8	«Դիլիջանի բեռնատարատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ	Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Գետափնյա 3	Բեռների և ուղևորների փոխադրում	86 796	43 398	25.01.2005թ.

Աճուրդ

N	Անվանում	Հասցե	Գործունեության տեսակը	Գնահատված արժեքը (հազ. դրամ)	Մեկնարկային գինը (հազ. դրամ)	Աճուրդի անցկացման օրը
1	Ավտոմեքենա «Գազ-31029» ո/հ 011OS01	-	-	1316,1	1052,88	17.12.2004թ.
2	Ավտոմեքենա «Գազ-3110» ո/հ 100OS01	-	-	1364,7	1091,76	17.12.2004թ.

Առավել մանրամասն տեղեկությունների համար տես՝ «Ազգ» օրաթերթի 23.10.04թ. N 187, 02.11.04թ. N 194, 06.11.04թ. N 198, 13.11.04թ. N 203, 16.11.04թ. N 204, 20.11.04թ. N 208, 23.11.04թ. N 209 և 03.12.04թ. N 216 համարները, կամ դիմել՝ «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ ք. Երևան, Հր. Քոչարի 27, հեռ. (+3741) 276594, ֆաքս՝ (+3741) 276594: էլ. փոստ: *tender@privatization.am, URL: www.privatization.am*:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այն մարդիկ, ովքեր մտածում են օտար երկիր գնալու մասին եւ կարիք ունեն իմանալու, թե ի՞նչ է սպասվում իրենց օտար պետություններին «հանձնվելու», փախստականի կարգավիճակ հայցելու դեպքում կամ աշխատանք կատարելու ինչպիսի ռեալ պայմաններ եւ հեռանկարներ կան, ի վերջո ո՞րն է իրականությունը եւ որը միֆը, ապա կարող են այցելել ՀՀ կառավարությանն առընթեր **միգրացիայի եւ փախստականների** վարչություն, որի հասցեն է՝ Հր. Քոչարի 4, ինչպես նաեւ զանգահարել **224727 «թեժ գիծ»** հեռախոսահամարով եւ հիշատակված հարցերի վերաբերյալ ստանալ բարձրորակ, սպառիչ եւ անվճար խորհրդատվություն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 56-24-83

«Գին» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 7.12.2004 Գինը՝ 100 դրամ